Ազգ
Azg
31 ՄԱՅԻՍ 2013 ՈՒՐԲԱԹ 89(5172)
ISSN: 1829-1651

# «Նրանց, ովքեր ապրում են Լեռնային Ղարաբաղում»

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության կարգավորման գործընթացի շուրջը (ոչ թե բուն կարգավորման գործընթացում) բավականին ուշագրավ իրադարձություններ են տեղի ունենում:

Մասնավորաբար, օրերս տարածաշրջան կատարած այցից առաջ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները հանդես եկան հայտարարությամբ, որտեղ նշեց հակամարտության կարգավորման նպատակով կողմերին առաջարկվելիք «նոր միջոցների» մասին: Այդ միջոցների կոնկրետ ինչպիսին լինելը, բնականաբար, հայտնի չդարձավ ոչ այցի ժամանակ, ոչ էլ դրանից հետո: Հետեւաբար, այդ «նոր միջոցները» պետք է ենթադրել:

Բայց, նախ Մոսկվա մեկնեց Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովը: Կասկածից վեր է, որ այդ «նոր միջոցների» մասին Մամեդյարովն անձամբ տեղեկացել է ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովից, ու հանդիպումից հետո՝ ասուլիսում, այնուհետեւ ռուսական պարբերականին տված հարցազրույցում խոսում է ԼՂ հիմնահարցի կարգավորման բացառապես խաղաղ ճանապարհի մասին՝ ընդգծելով, սակայն, որ «Ադրբեջանը կավելացնի իր ակտիվ ջանքերը միայն հոկտեմբերին կայանալիք համապետական ընտրություններից հետո»: Հետեւաբար, Բաքվին «նոր միջոցներին» ավելի հանգամանալից ծանոթանալու համար ժամանակ է անհրաժեշտ, կամ այդ միջոցներն այնքան լավ չեն Բաքվի համար, եւ Մամեդյարովը հասկանում է, որ դրանց այս պահին բարձրաձայնումը կարող է բացասաբար անդրադառնալ Իլհամ Ալիեւի երրորդ նախագահական նկրտումների վրա:

Բայց մոսկովյան Լավրով-Մամեդյարով հանդիպումը ամենեւին էլ այսքան միանշանակ չէր: Լավրովն ինքը իր հայտարարություններով որոշակիորեն անհանգստանալու հիմքեր տալիս է ԼՂ հակամարտության հայկական կողմերին: Մասնավորաբար՝ ՌԴ ԱԳ նախարարության պաշտոնական կայքէջում «ՌԴ եւ Ադրբեջանի ԱԳ նախարարներ Սերգեյ Լավրովի եւ Էլմար Մամեդյարովի համատեղ մամուլի ասուլիսը Մոսկվայում» խորագրի ներքո զետեղված նյութում կարդում ենք Լավրովի հետեւյալ արտահայտությունները՝ «Ստատուս քվոն ձեռնտու չէ ոչ մի կողմին. առաջին հերթին՝ Ադրբեջանին, Հայաստանին եւ նրանց, ովքեր ապրում են Լեռնային Ղարաբաղում»: Այնուհետեւ Լավրովը նշել է. «Ստատուս քվոյի պահպանումը ոչ միայն չլուծված է թողնում ադրբեջանական հողերի վերադարձի հարցը, այլեւ պահպանում է Հայաստանի էներգետիկ շրջափակումը, հետեւաբար ստատուս քվոյի պահպանումն անթույլատրելի է»:

Տես էջ 3

# Սփյուռքում գումար հավաքագրելը բնավ հեշտ չէ

## *«Հայաստան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 22-րդ նիստը*

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 22-րդ նիստը տեղի ունեցավ երեկ կառավարության ընդունելությունների տանը: Նիստի բացմանը հանրապետության նախագահը, որը նաեւ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է, հանդես եկավ խոսքով: Սերժ Սարգսյանը նախ եւ առաջ շեշտեց, որ նիստը կրելու է խիստ աշխատանքային բնույթ, ապա նշեց. «Առաջիկա տարիներին Հայաստանում ընտրությունների բացակայությունը կծառայի լավ առիթ քիչ խոսելու ու շատ աշխատելու համար: Կարծում եմ՝ առաջիկա տարիները ոչ միայն Հայաստանի իշխանությունների, այլեւ ողջ հայության համար պետք է լինեն տրտնաջան ու լուրջ աշխատանքի տարիներ: Եվ լուրջ արդյունքներ արձանագրելու համար ունենք բոլոր անհրաժեշտ հիմքերը»:



Երեկվա նիստի ժամանակ նախորդ տարվա կատարված աշխատանքներն ու առաջիկա ծրագրերը քննարկելուն զուգահեռ կրկին ընդգծվեց սիրիահայությանն օգնելու հարցը: Ըստ նախագահ Սարգսյանի՝ սիրիահայության խնդիրը շարունակում է մնալ բաց վերք ողջ հայության համար. «Մենք, որպես պետություն ու որպես հայ ժողովուրդ, աջակցել եւ աջակցելու ենք սիրիահայ մեր քույրերին ու եղբայրներին, անկախ նրանից՝ նրանք եկել են Հայաստան, թե՞ մնացել են Սիրիայում»: Իսկ ելույթը եզրափակելիս Սերժ Սարգսյանը նշեց, որ ոչ մի կառույց այնքան ամբողջական չի արտացոլում Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունն ու հայության հնարավորությունները, որքան «Հայաստան» համահայկական հիմնադրամը:

Վերջին տարիներին «Հայաստան» հիմնադրամի քարտեզի վրա հայտնվել են բնակավայրեր, որոնք օրինակներ են համայնքների լիակատար զարգացմանն ուղղված ծրագրերի: Օրինակ՝ միայն Տավուշի մարզի Դիտավան գյուղում անցած տարիներին հիմնադրամն ավարտին է հասցրել հինգ ծրագիր՝ նոր դպրոց, ջրագիծ, գազատար, համայնքային կենտրոն, ոռոգման համակարգ, որոնք հեշտացրել են գյուղի բնակիչների կյանքը: Ընդհանրապես իր գործունեության ընթացքում Հայաստանում ու Լեռնային Ղարաբաղում հիմնադրամն իրականացրել է բազմաթիվ համալիր ծրագրեր, որոնք փաստում են, որ հետեւողականությունը հիմնադրամի կարեւորագույն սկզբունքներից է:

Տես էջ 2

# Արքայազն Չարլզն այցելեց Մայր աթոռ Սուրբ Էջմիածին

ARMENPRESS



Մայիսի 30-ին Ուելսի արքայազն Չարլզը, որը Հայաստանում է «Երեւան, իմ սեր» բարեգործական հիմնադրամի հրավերով, այցելեց համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր աթոռ Սուրբ Էջմիածին:

Մայր տաճարում արքայազնին ողջունեց Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը: Վեհափառ հայրապետն արքայազնին ներկայացրեց Հայոց եկեղեցու պատմական առաքելությունը հայ ժողովրդի կյանքում եւ կարեւոր դերակատարությունը ազգային ինքնության պահպանման, անկախ պետականության վերականգնման գործում: Նորին սրբությունը նաեւ անդրադարձավ միջեկեղեցական հարաբերություններին՝ մասնավորապես ներկայացնելով Հայ եւ Անգլիկան եկեղեցիների միջեւ առկա համագործակցությունը:

Այնուհետեւ Ամենայն հայոց կաթողիկոսը եւ արքայազն Չարլզն այցելեցին Մայր տաճարի ավանդատուն-թանգարան, ուր Ուելսի իշխանը ծանոթացավ Հայ եկեղեցու կողմից պահպանվող հոգեւոր եւ մշակութային արժեքներին:

Վեհափառ հայրապետը եւ արքայազնը միասին շրջեցին նաեւ Մայր աթոռի տարածքում, այցելեցին Սուրբ Վարդան եւ Սուրբ Հովհաննես Մկրտիչ մատուռ-մկրտարան: Շրջայցի ընթացքում արքայազնին ներկայացվեց Մայր աթոռ Ս. Էջմիածնի գործունեությունը:

Արքայազն Չարլզը եղավ նաեւ «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում, ուր ի պատիվ արքայազնի տեղի ունեցավ ընդունելություն, որին ներկա էին նաեւ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարներ տեր եւ տիկին Վաչե եւ Թամար Մանուկյանները, տիար Արմեն Սարգսյանը, տեր եւ տիկին Հայկ եւ Էլզա Դիդիզյանները:

Հայաստան այցի ընթացքում արքայազն Չարլզը եղավ նաեւ մի շարք սրբավայրերում՝ Խոր Վիրապի վանքում, Ս. Գեղարդավանքում եւ Ս. Հռիփսիմե վանքում:

# Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Ընդհանուր անդրադարձ Միացյալ Նահանգներում վերջերս լույս տեսած Դիտրոյթի Ալեք եւ Մարի Մանուկյան թանգարանի հավաքածուն ներկայացնող «Հայկական գանձերի մի ժառանգություն». «Վկայություն մի ժողովրդի» պատկերագրքին:

Արամ Խաչատրյանի 110-ամյակին՝ Հովհաննես Թաքուլյանի հուշագրության շարքից՝ «Մի ինքնագրի անսովոր պատմություն»:

Վիգեն Չալդրանյանը վերջին՝ «Ձայն լռության» ֆիլմի բանաստեղծականությունն ու դրամատիզմը, Վարսիկ Գրիգորյանի հայացքով:

Սերժ Ավետիքյանի «Անուշ» հայաստանյան ներկայացման արձագանքների եւ տարիներ առաջ Դիտրոյթի օպերային թատրոնի «Անուշ» ներկայացման ցնցող հաջողությունների զուգահեռները Երվանդ Ազատյանի հրապարակման մեջ:

Խոսքի ազատության եւ գրաքննության հակասությունն ու դրանց դրսեւորումները Թուրքիայում: Ըստ «Միրոր սփեքթեյթըր» շաբաթաթերթի, ներկայացնում է Հակոբ Ծուլիկյանը:

Հայ գրատպության 500-ամյակի շրջանակներում Վենետիկում տպագրված եռալեզու (անգլերեն, իտալերեն, ֆրանսերեն) «Հայաստանյան քաղաքակրթության դրոշմներ» ժողովածուն ներկայացնում է Զոհրաբ Գեւորգյանը:

Մ. Բ.

# Անշարժ գույքի գործարքների քանակի աճն ապրիլին չպահպանվեց

## *Այդուհանդերձ, անցյալ տարվա նույն ամիսների համեմատ շուկան աշխուժացել է*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2013-ի ապրիլին Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 15824 գործարք, ինչը 2,8 տոկոսով ցածր է նախորդ ամսվա՝ մարտի եւ 16,7 տոկոսով բարձր՝ 2012-ի ապրիլի գործարքների համեմատ: Հիշեցնենք, որ փետրվարին եւ մարտին գործարքների քանակի զգալի աճ էր արձանագրվել, ինչը չի պահպանվել ապրիլին:

Օտարման գործարքների քանակը ապրիլին մարտի համեմատ նվազել է 3 տոկոսով, իսկ անցյալ տարվա ապրիլի համեմատ աճել՝ 17,5 տոկոսով: 4008 օտարման գործարքներից առուվաճառքներինը կազմել է 74,6 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39,5 տոկոսն արձանագրվել է Երեւան քաղաքում, իսկ առուվաճառքի գործարքների 63,7 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2013-ի մարտի համեմատ, ապրիլին բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում նվազել է 2,5 տոկոսով, իսկ նախորդ տարվա ապրիլի համեմատ՝ աճել 4 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում այս տարվա ապրիլին մարտի համեմատ աճել են՝ 0,6 տոկոսով: Ըստ վարչական շրջանների՝ Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել.

Տես էջ 8

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | ապրիլ 2012 թ. | ապրիլ 2013 թ. | մարտ 2012 թ. |
| Կենտրոն | 405000 | 428000 | 426100 |
| Արաբկիր | 335000 | 355500 | 353500 |
| Քանաքեռ-Զեյթուն | 262300 | 282200 | 281400 |
| Նոր Նորք | 225100 | 250000 | 248100 |
| Ավան | 235100 | 258050 | 256800 |
| Էրեբունի | 233100 | 248200 | 247100 |
| Շենգավիթ | 231000 | 254000 | 252500 |
| Դավթաշեն | 257500 | 273500 | 272000 |
| Աջափնյակ | 225050 | 246500 | 245000 |
| Մալաթիա-Սեբաստիա | 222000 | 238550 | 237000 |
| Նուբարաշեն | 140100 | 151000 | 148000 |
| Միջինը Երեւանում (բացի Նորք-Մարաշից) | 251900 | 271400 | 269800 |

# 4 ամսվա ընթացքում երկրից մեկնել է 36. 415 հոգի




ՀՀ կառավարության առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կայքից տեղեկացանք, որ այս տարվա հունվար-ապրիլ ամիսներին մեր երկրից մեկնել է 229.864 մարդ, ժամանել 193.449-ը:

2013-ի հունվար-ապրիլ ամիսներին «Զվարթնոց» միջազգային օդանավակայանով փոխադրվել է 423. 313 ուղեւոր, նախորդ տարի նույն ժամանակահատվածում փոխադրվել է 430.515 ուղեւոր: Սա մեկնումների մասին ամբողջական պատկերը չէ, որովհետեւ հայտնի չէ, թե ավտոտրանսպորտային միջոցներով որքան բնակիչ է մեկնում արտերկիր: Մինչդեռ Թուրքիա եւ Ռուսաստան հիմնականում մեկնում են ավտոբուսներով, իսկ վերոնշյալ երկրները արտագաղթի ու խոպանի մոտիկ կենտրոններից են: Բնականաբար, այդ պարագայում պատկերն առավել սարսափելի կլինի:

Երեկ արտագաղթին ու արտագնա աշխատանք մեկնողների վերաբերյալ կարծիք է հայտնել Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը: Նրա գնահատմամբ՝ կառավարությունը մտահոգված է արտագաղթով, սակայն այն այսօր չէ, որ սկսվել է. «Վերջին քսան տարում Հայաստանից մեծ թվով մարդիկ են արտագաղթել: Ես հիմա գալիս եմ Կիրգիզիայից, արտագաղթի տեմպեր կան ե՛ւ այնտեղ, ե՛ւ տարբեր երկրներում: Ընդհանրապես Հայաստանի դեմոգրաֆիկ անվտանգությունը մտահոգում է, եւ դա ավելի շատ համալիր ծրագիր է, եւ մենք հնարավորությունների շրջանում փորձում ենք անել հնարավորը», ասաց Բաղդասարյանը՝ հավելելով, որ երկրից հեռանալու մի քանի պատճառ կա՝ սկսած սոցիալտնտեսականից, վերջացրած՝ ավելի լավ կյանք փնտրելու հույսով: Բաղդասարյանը շեշտում է, որ այս խնդիրը միայն Հայաստանինը չէ:

Ըստ Բաղդասարյանի, հենց այդ նպատակով է Ռուսաստանը միգրացիոն քաղաքականություն մշակել եւ խրախուսում է վերաբնակեցումը Ռուսաստանի հյուսիսային շրջաններում: Անվտանգության խորհրդի քարտուղարը հավաստիացնում է, որ բազմաթիվ երկրներ են կանգնած արտագաղթի՞ խնդրի առաջ եւ դա է պատճառը, որ նկատելի են միգրացիոն շարժեր: Ըստ նրա, Ռուսաստանի իրականացրած «Հայրենակիցներ» ծրագիրն իրականացվում է բոլոր երկրներում: «Եթե չլիներ այդ ծրագիրը, մարդիկ չէի՞ն գնալու Ռուսաստան, հը՞, չե՞ն գնում խոպան կամ արտագնա աշխատանքի: Խոսքը քաղաքակիրթ միգրացիայի մասին է», ասաց Բաղդասարյանը՝ հավելելով, որ արտագաղթի դեմ պետք է պայքարել երկրի տնտեսությունը, սոցիալական ենթակառուցվածքներն ու տնտեսական ենթակառուցվածքներն ամրապնդելով, կատարելագործելով, որպեսզի կարողանանք նվազեցնել արտագաղթը»: Բաղդասարյանը նաեւ ասաց, որ բնակչության միգրացիոն շարժերը երբեք հնարավոր չի լինի ամբողջությամբ կասեցնել:

Հ. Հ.

# Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ

**Երեկ հետմիջօրեին ՀՀ կառավարության ընդունելությունների տանը տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի 3-րդ նիստը, նախագահությամբ Սերժ Սարգսյանի:**

**Ողջունելով հանձնաժողովի անդամներին, որոնց շարքում էին ԼՂՀ նախագահը, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն, Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսի ներկայացուցիչը, ՀՀ վարչապետը, բարձրաստիճան մի շարք պաշտոնյաներ, նախարարներ, սփյուռքի քաղաքական, բարեգործական, կրոնական եւ մշակութային գլխավոր կազմակերպությունների ներկայացուցիչներ, նախագահը կարեւորեց, որ նիստերի միջեւ ընկած ժամանակահատվածում հանձնաժողովն անընդհատ աշխատել է՝ իրականացնելով իր ստանձնած առաջադրանքները:**

**Նիստն ընթացավ օրակարգում ընդգրկված հարցերին համապատասխան, եղան զեկուցումներ, առաջարկություններ, կայացվեցին որոշումներ: Նիստի ավարտին որոշվեց հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել 2014 թ. մայիս ամսին:**

# «Ողբերգություն հայերի ցեղասպանության կուլիսների հետեւում»՝ դասախոսություն Լոնդոնի համալսարանում

**Մեծ եղեռնի հարյուրամյակի տարելիցին ընդառաջ կազմակերպված միջոցառումների շրջանակներում հունիսի 4-ին Լոնդոնի համալսարանում կկայանա դոկտ. Դեյվիդ Գոնտի դասախոսությունը «Ասորիներ, սիրիացիներ, քրդեր եւ թուրքեր: Ողբերգություն հայերի ցեղասպանության կուլիսների հետեւում» թեմայով: Նախաձեռնողներն են «Գալուստ Գյուլբենկյան» հաստատության օժանդակությամբ Լոնդոնի համալսարանում վերջերս ստեղծված Հայկական ուսումնասիրությունների ծրագիրը (հիմնադիր-տնօրեն Գրիգոր Մոսկոֆյան) եւ «SOAS-ում Հայաստանի բարեկամները» կազմակերպությունը:**

**Առաջին աշխարհամարտի օրերին քրիստոնեական շատ խմբավորումներ կոտորվեցին, էթնիկական զտումների եւ ցեղասպանության ենթարկվեցին: Նրանց մեծ մասը ապրում էր Արեւելյան Անատոլիայում եւ Հյուսիսային Միջագետքում: Կոտորածներին զոհ գնաց մոտ 250 հազար հոգի: Ուսումնասիրությունները քիչ են այս մասին, բայց ասորիները հիշում են եւ 1915 թվականը անվանում «Սեյֆո», այսինքն՝ «յաթաղանի տարի»: Նրանք ամեն տարի աշխարհով մեկ հիշատակում են փետրվարյան այդ իրադարձությունը եւ «Սեյֆոյին» տալիս ցեղասպանության նշանակություն:**

**Դոկտ. Դեյվիդ Գոնտը Սոդերտորն համալսարանի (Ստոկհոլմ) Բալթիկայի եւ Արեւելյան Եվրոպայի երկրների ուսումնասիրությունների կենտրոնի պատմության դասախոս է եւ անդամ Եվրոպական ակադեմիայի: Բազմաթիվ հոդվածներ է ստորագրել Օսմանյան կայսրությունում ասորիների ճակատագրի մասին:**

**Հ. Ծ.**

# Առողջ կինը՝ հոգեբուժարանում

**Կոմիտաս 56 շենքի բնակիչները խստորեն դատապարտում են մի շարք պաշտոնատար անձանց կողմից օրեր առաջ հանիրավի հոգեբուժարան տեղափոխված Ամալյա Նազարեթյանին լրատվամիջոցներում որպես հոգեկան հիվանդ ներկայացնելու խայտառակ իրողությունը: Երկար տարիներ ճանաչելով Ամալյա Նազարեթյանին, բոլորս փաստում ենք, որ նա լիովին նորմալ, ադեկվատ եւ ինտելիգենտ անձնավորություն է, երկար տարիներ դասավանդած Օստրովսկու ուսումնարանում, իսկ «Իդեալ» խանութի տերերի կամայականությունների դեմ ընդվզելու համար հոգեբուժարան տեղափոխելն ունի բացառապես քաղաքական դրդապատճառներ:**

**Ցավում ենք, որ մեր երկրում հարցեր լուծելու համար դեռեւս օգտագործվում են խորհրդային «լավագույն» տարիներին բնորոշ մեթոդները:**

**Պահանջում ենք շտապ դուրս գրել Ամալյա Նազարեթյանին հոգեբուժարանից՝ միաժամանակ կոչ անելով լրագրողներին եւ իրավապաշտպաններին՝ պահանջել հանդիպում տիկին Նազարեթյանի հետ եւ համոզվել մեր հայտարարության իսկության մեջ:**

**Երեւանի Կոմիտաս 56 շենքի 39 բնակիչներ**

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԻՍՏ

# Սփյուռքում գումար հավաքագրելը բնավ հեշտ չէ

*1-ին էջից*

Հիմնադրամի 22-րդ նիստին ներկա էին նաեւ ԼՂ նախագահ Բակո Սահակյանը, ՀՀ վարչապետը, արտգործնախարարը, սփյուռքի նախարարը եւ ուրիշներ: Եվ ընդհանուր առմամբ՝ հոգաբարձուների խորհրդի 37 անդամներից ներկա էին 28-ը:

Հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանը նիստի ընթացքում ներկայացրեց գործադիր վարչության հաշվետվությունը 2012-ի կատարած աշխատանքների մասին: Իսկ լրագրողներին տված հարցազրույցի ժամանակ Արա Վարդանյանը տեղեկացրեց, որ 2012-ի աշխատանքները գնահատվել են գոհացուցիչ, ու խնդիրներ չեն ծագել: Նա նշեց՝ առաջարկվել է, որ հիմնադրամի դրամահավաքը նաեւ ուղղվի Ղարաբաղ տանող երկրորդ՝ Վարդենիս-Մարտակերտ ճանապարհի կառուցմանը: Ըստ նրա՝ ճանապարհի հողային աշխատանքների մեծամասնությունը ՀՀ եւ ԼՂՀ կառավարությունների կողմից արդեն իրականացվել է, եւ հիմնադրամին մնում է կատարել ասֆալտապատման ու բարեկարգման աշխատանքները: Ճանապարհի ընդհանուր երկարությունը 114 կիլոմետր է, իսկ արժեքը՝ մոտավորապես 30 միլիոն դոլար: «Ընտրվել է հատկապես այս ճանապարհը, քանի որ դա Հայաստանը Ղարաբաղին կապող երկրորդ ճանապարհն է, եւ սա կհեշտացնի դեպի Հայաստան ու Ղարաբաղ գալ-գնալը, կզարգացնի տուրիզմը: Ճանապարհի կառուցումը կարեւոր է նաեւ ռազմավարական առումով: Իրոք, ուրախ եմ, որ «Հայաստան» հիմնադրամին պատիվ է ընձեռվում իրականացնելու նման ծրագիր: Եվ նոր ճանապարհով Երեւանից հնարավոր կլինի հասնել Ստեփանակերտ ընդամենը 3 ժամում», ասաց Արա Վարդանյանը:



ՖՈՏՈԼՈՒՐ

2013-ի բոլոր դրամահավաքները կավարտվեն տարեվերջին, հունվարին վերջնականապես կհայտարարվի, թե որքան գումար է հավաքվել, այնուհետեւ կհայտարարվեն եւ շինարարական մրցույթները:

Ինչ վերաբերում է սիրիահայության օգնելու հարցին, Արա Վարդանյանը ասում է, որ կշարունակեն ինչպես նախկինում՝ տրամադրելով ուսանողների ուսանողական վարձերը, հոգալով սիրիահայերի բուժման ծախսերը եւ այլն:

Ավստրիայի «Հայաստան» համահայկական հիմնադրամի պատասխանատու Ռազմիկ Թամրազյանը նույնպես նշեց, որ 2012-ին հիմնադրամի գործունեությունն արդյունավետ է եղել, ու նախատեսված բոլոր աշխատանքները կատարվել են:

Իսկ 2013-ի համար ամեն տեղական մարմին իր ծրագրերն ունի: «Ավստրիայի մեր տեղական մարմնի հավաքագրած բոլոր նվիրատվությունները տրամադրվում են զոհված ազատամարտիկների ու առաջին կարգի հաշմանդամների ընտանիքներին օգնելու նպատակով: Եվ ամեն տարի նրանց տրամադրվող գումարը կազմում է մոտավորապես 15-20 հազար դոլար», ավելացրեց Ռազմիկ Թամրազյանը:

Իսկ Տորոնտոյի տեղական մարմնի հիմնադիր-ատենապետ Մկրտիչ Մկրտչյանը լրագրողների հետ զրույցի ժամանակ ասաց, որ մարդասիրական աշխատանքին զուգահեռ հիմնադրամի գործունեությունը նաեւ օժանդակում է տնտեսությանը:

Անգլիայի մասնաճյուղի ատենապետուհի Արմինե Կարապետյանը գալիք ծրագրերին նույնպես անդրադարձավ. «Կարծում եմ՝ մեր մասնաճյուղն այս տարի կվերցնի Աշտարակի մոտ գտնվող Սասունիկ գյուղում մանկապարտեզ կառուցելու գործը: Սասունիկում հիմա մանկապարտեզ չկա, եւ գյուղի շուրջ 100 երեխա ստիպված մանկապարտեզ է հաճախում Աշտարակում»:

Արմինե Կարապետյանը նաեւ նշում է, որ Սփյուռքում դրամ հավաքագրելը բնավ հեշտ չէ, եւ պատճառներից մեկն էլ Սփյուռքում սերնդափոխությունն է. երիտասարդները չունեն հայրենիքի մասին այնպիսի պատկերացումներ եւ այնպիսի վերաբերմունք հայրենիքի հանդեպ, ինչպիսին ունեն Սփյուռքի ավելի ավագ սերնդի մեր հայրենակիցները:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ցեղասպանության ճանաչումը` հաշտության կամուրջ



Մայիսի 29-ին, Եվրոպայի Հայաստանի բարեկամներ կազմակերպության նախաձեռնությամբ, Բրյուսելում` Եվրոխորհրդարանի շենքում կայացավ «Հայոց ցեղասպանության ճանա՛չումը հաշտեցման կամուրջ խորագրով» կոնֆերանս, որին մասնակցում էին Եվրոմիություն-Հայաստան բարեկամության խմբի նախագահ Էլենի Տհոչարուսը, Ֆրանսիայի խորհրդարանի UMP կուսակցության պատգամավոր Վալերի Բուայեն, Եվրոպայի Հայաստանի բարեկամներ կազմակերպության պատասխանատու Գասպար Գասպարյանը, «Vous nexistez pas» գրքի հեղինակ Սեւակ Թորոսյանը, Լուվենի Կաթոլիկ համալսարանի պրոֆեսոր Բեռնարդ Կուլին, Բելգիայում ՀՀ դեսպան Ավետ Ադոնցը :

Հիշեցնենք, որ ֆրանսիայի պատգամավոր տիկին Վալերի Բուայեի ներդրումն ու ջանքերը մեծ են Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծի ընդունման խնդրում: Այս տարի` ապրիլի 24-ին նա այցելել է Հայաստան եւ Ղարաբաղ: Շնորհակալություն հայտնելով իրեն ընձեռված այդ հնարավորության համար` նա ընդգծեց, որ օրինագծի ընդունումը նախ եւ առաջ նշանակում է մարդու իրավունքների պաշտպանություն, ինչը իր երկրի` Ֆրանսիայի կարեւորագույն արժեքներից է:

Տիկին Բուայեն տեղեկացրեց, որ ինքը եւ իր ընտանիքը բազմիցս ենթարկվել են ճնշումների եւ սպառնալիքների: Սակայն որքան շատ են սպառնալիքները` այնքան ավելի են ամրապնդվում Վալերի Բուայեի ներքին համոզմունքները օրենքի ընդունման խնդրում:

Ցավով վերաբերվելով Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի կողմից օրենքի քննադատությանը, նա համոզմունք հայտնեց. որ դա իրեն ամենեւին չի հիասթափեցրել, հակառակը` օգնել է, եւ ներկայումս դարձյալ հանդես է եկել եւս երկու նոր առաջարկությամբ:

Այսօր, առավել քան երբեւէ, Ֆրանսիան իր ձայնը պետք է բարձրացնի մարդու իրավունքների պաշտպանության, մարդկային արժեքների եւ ազատության համար: Հիշողությունը եւ մարդու իրավունքները նավթով չեն գնվում, ընդգծեց Վալերի Բուայեն` հավելելով, որ օրենքի մերժման հետեւանքները շատ ավելի ծանր կարող են լինել, քանի որ հանցագործությունը եթե չի պատժվում, ապա կրկնվում է:

Ըստ Վալերի Բուայեի, 2012-ին Նիկոլա Սարկոզին եւ Ֆրանսուա Օլանդը Փարիզում հանդիպել են Կոմիտասի արձանի մոտ եւ օրենքի ընդունման վերաբերյալ երկուստեք համաձայնության են եկել:

Տիկին Բուայեի խոսքերով ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախաշեմին պետք է արվի հնարավորը, որպեսզի խնդիրը վերջնական լուծում ստանա:

«Մենք չենք ապրում անցյալով, մենք վերապրում ենք անցյալը, այդ իսկ պատճառով ցեղասպանությունը պետք է ընդունվի, դա մեծ դեր է խաղում եւ թույլ կտա հաշտության կամուրջ ստեղծել երկու երկրների միջեւ», ընդգծեց Լուվենի համալսարանի պրոֆեսոր Բեռնարդ Կուլին, հավելելով, որ ցեղասպանության մերժումը եւս ցեղասպանություն է:

Կոնֆերանսին մասնակցել է նաեւ հայաստանյան պատվիրակությունը` Նաիրա Զոհրաբյանը, Զարուհի Փոստանջյանը, Հրանտ Բագրատյանը, Վահան Հովհաննիսյանը, Մհեր Շահգելդյանը եւ այլք, սակայն նրանք կոնֆերանսը սկսվելուց երկու րոպե առաջ լքեցին դահլիճը եւ վերադարձան կոնֆերանսի ավարտին` վերջին հինգ րոպեին:

**ԱՐԱՔՍ ՄԱՓԱՐՅԱՆ**
*Բրյուսել*

**ՄԱՐՍԵԼ**

# «Ֆրանս-հայկական գերազանցության շաբաթ»

Հունիսի 17-23-ը Ֆրանսիայի Մարսել քաղաքում ՀՀ սփյուռքի նախարարությունը «Terre d’Armenie» կազմակերպության, «ARARAT TV»-ի, Մարսելի փոխքաղաքապետ Դիդիե Պարակյանի, Մարսելի Հայ-ֆրանսիական առեւտրաարդյունաբերական պալատի եւ Մարսելի հայ մշակույթի եւ երիտասարդության տան ղեկավար Կարո Հովսեփյանի հետ համատեղ կազմակերպելու է «Ֆրանս-հայկական գերազանցության շաբաթ»: Ծրագրի շրջանակներում կկայանա «Անրի Վեռնոյ» ցուցահանդեսի եւ «Անրի Վեռնոյի» անվան հրապարակի բացման արարողությունը: Շառլ Ազնավուրին կշնորհվի Մարսելի պատվավոր քաղաքացու կոչում: Կազմակերպվելու են գրքերի շնորհանդեսներ եւ ֆիլմերի ցուցադրություններ: Տեղի կունենա Արցախին նվիրված քննարկում: Հայաստանի տուրիզմի օրվա շրջանակներում կներկայացվի ցուցադրություն` նվիրված ՀՀ մարզերին:

Տեղի կունենա հայկական ավանդական ճաշատեսակների ցուցադրություն եւ համտես, կներկայացվեն Հայաստանի գարեջրի գործարանի ապրանքատեսակները:

# Հայ առեւտրաարդյունաբերական պալատների 3-րդ համաժողովը

**Հունիսի 20-23-ը Ֆրանսիայի Մարսել քաղաքում տեղի կունենա աշխարհում գրանցված բոլոր հայ առեւտրաարդյունաբերական պալատների 3-րդ համաժողովը: Մասնակից երկրներն են Հայաստանը, Արցախը, Ավստրալիան, Բելգիան, Կանադան, Իրանը, Ռուսաստանը, Ֆրանսիան, Հունաստանը, Լիբանանը, Արգենտինան, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Իտալիան եւ Իսպանիան:**

# Եվրոպայի հայ համայնքների ղեկավարների եւ ներկայացուցիչների հավաք-քննարկում Մարսելում

**Հունիսի 22-ին ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ Ֆրանսիայի Մարսել քաղաքում տեղի կունենա Եվրոպայի հայ համայնքների ղեկավարների եւ ներկայացուցիչների հավաք-քննարկումը, որի ընթացքում սփյուռքի նախարարությունը կներկայացնի իր ծրագրերը եւ նախարարության կատարած աշխատանքները, հայ համայնքի ներկայացուցիչները կներկայացնեն իրենց կատարած աշխատանքները, Սփյուռքի նախարարության հետ համատեղ կմշակվեն ծրագրեր, կկազմակերպվեն «Հայաստան-Սփյուռք գործակցությունը` Ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ» խորագրով քննարկումներ: Համաժողովին մասնակցելու են Գերմանիայի, Բելգիայի, Լիտվայի, Իսպանիայի, Հունաստանի, Իտալիայի, Հոլանդիայի, Ավստրիայի, Չեխիայի, Ռումինիայի, Շվեդիայի, Հունգարիայի, Ֆրանսիայի հայկական համայնքների շուրջ 80 ներկայացուցիչներ:**

# Օգնեցեք երիտասարդ հիվանդին

Արցախցի երիտասարդ տղային, որը տառապում է քաղցկեղի ծանր տեսակով, բուժման համար անհրաժեշտ է նյութական շտապ օգնություն. բուժումը կարելի է կատարել միայն Ռուսաստանում (Օբնինսկ) եւ Գերմանիայում: Խնդրում ենք օգնել: Ժամանակը սահմանափակ է:

Փոխանցումները կարելի է կատարել «Արցախբանկի» հետեւյալ հաշվեհամարներին` Նազիկ Նալբանդյանի անունով:

22311012587700 AMD
22311012587701 USA
Նազիկ Նալբանդյանին

# «Նրանց, ովքեր ապրում են Լեռնային Ղարաբաղում»

*1-ին էջից*

Հայկական մեդիայում, հատկապես ընդդիմադիր շրջանակները Լավրովի այս արտահայտությունները սկսեցին դիտարկել Ռուսաստան-Հայաստան, ավելի կոնկրետ` նախագահ Պուտին-նախագահ Սարգսյան լարված կամ սառը հարաբերությունների տիրույթում, որոնց շրջանակներում է նաեւ գազի սակագնի թանկացումը Հայաստանի համար: Գուցե եւ այստեղ ճշմարտության հատիկ կա, մասնավորաբար, եթե նախագահ Մեդվեդեւի հետ նախագահ Սարգսյանը հանդիպել է ավելին քան տասը անգամ Մեդվեդեւի նախագահության չորս տարիների ընթացքում, ապա նախագահ Պուտինին նախագահ Սարգսյանը հանդիպել է ընդամենը երկու անգամ` երկու անգամ էլ Մոսկվայում, առաջին անգամ, երբ Պուտինը վերադարձավ Կրեմլ, երկրորդ անգամ, երբ Սարգսյանը վերընտրվեց Հայաստանի նախագահի պաշտոնում:

Սակայն իրենց տարածաշրջանային այցելության ընթացքում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներից Ռուսաստանի ներկայացուցիչ Իգոր Պոպովը փաստացի հերքեց իր իսկ ԱԳ նախարարի հիշյալ արտահայտությունները: Պոպովի համոզմամբ` Լավրովը ոչ թե ասել է` «Ստատուս քվոն ձեռնտու չէ առաջին հերթին Ադրբեջանին, Հայաստանին եւ նրանց, ովքեր ապրում են Լեռնային Ղարաբաղում», այլ ասել է. «Ստատուս քվոն ձեռնտու չէ առաջին հերթին Ադրբեջանին, Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին»: Պոպովը վստահ է, որ Լավրովը փոխանակ ասելու`«Ստատուս քվոյի պահպանումը ոչ միայն չլուծված է թողնում ադրբեջանական հողերի վերադարձի հարցը, այլեւ պահպանում է Հայաստանի էներգետիկ շրջափակումը, հետեւաբար ստատուս քվոյի պահպանումն անթույլատրելի է», այլ ընդամենն ասել է. «Ստատուս քվոյի պահպանումը շարունակական է թողնում Հայաստանի էներգետիկ շրջափակումը, հետեւաբար ստատուս քվոյի պահպանումն անթույլատրելի է»: Բայց, ՌԴ ԱԳՆ-ի պաշտոնական կայքէջի վերոհիշյալ խորագրով նյութում, Լավրովի առաջին վարկածով արտահայտությունները ինչպես կարդում էինք Պոպովի հերքումից առաջ, այնպես էլ կարդում ենք Պոպովի հերքումից հետո: Հազիվ թե ազերպրոմի ձեռքերը կարողանան հասնել Ռուսաստանի արտգործնախարարության պաշտոնական կայք` խեղաթյուրելու նախարար Լավրովի խոսքերը: Հետեւաբար... Հետեւաբար կամ Լավրովն է եղել ադրբեջանցի իր գործընկերոջ թողած տպավորության տակ ու չի ցանկացել նեղացնել հյուրերին, կամ Պոպովն է եղել հայկական տարածքում, ու չի ցանկացել նեղացնել այսքան հյուրընկալ հայերիս:

Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանն իր հերթին Օքսվորդի համալսարանի լսարանի առջեւ ելույթ ունեցավ, որտեղ մանրամասնորեն ներկայացրեց ԼՂ հակամարտության պատմությունն ու բանակցությունների ընթացքը: Նալբանդյանի խոսքերից բրիտանական ազդեցիկ լսարանն իմացավ, որ Ադրբեջանը մշտապես հակադրվել է միջնորդական կողմից բերված հակամարտությունը լուծելուն ուղղված միջոցներին ու ծրագրերին, առաջարկելով նրանց վերաբերյալ իր բազմահատոր առարկությունները: Ու եթե Մոսկվայում Լավրովը նշեց, թե «Ադրբեջանի համար ընդունելի էր մադրիդյան սկզբունքների 2009-ի նորացված տարբերակը` որպես բանակցությունների հիմք», ապա Օքսֆորդում մեր նախարարը շեշտեց, որ «...անգամ այդ տարբերակի առնչությամբ Բաքուն ուներ սեփական առաջարկությունները»:

Շուտով Լավրովի հետ հանդիպելու հերթը Նալբանդյանինն է: Վստահաբար` Հայաստանի ԱԳ նախարարը եւս անձամբ Լավրովից, գուցե ավելի նրբություններով կտեղեկանա միջնորդների բերած «նոր միջոցների» մասին: Գուցե այդ հանդիպումից հետո էլ ռուս համանախագահ Պոպովը Ադրբեջանում հերքի ՌԴ ԱԳՆ-ի պաշտոնական կայքէջում զետեղված Լավրովի խոսքերը... Իսկ մինչ այդ, Մամեդյարովը վերադարձավ Բաքու, բնականաբար Իլհամ Ալիեւին ներկայացավ «մոսկովյան զեկույցով», վերջինս էլ մայիսի 28-ին, որը Ադրբեջանում եւս համապետական տոն է, հանդես եկավ հայտարարությամբ. «Ադրբեջանը միշտ է հայտարարել, որ իր համար կա հակամարտությունը լուծելու երկու տարբերակ` խաղաղ եւ պատերազմական: Մենք պատրաստ ենք հենց այս պահին ուժով հետ բերել մեր հողերը, որոնք ամբողջ աշխարհի կողմից են ճանաչված ադրբեջանական հողեր (հիշենք Լավրովի արտահայտությունը` «ադրբեջանական հողերի վերադարձի» մասին-Հ. Ա.), սակայն կարծում ենք, որ հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու հնարավորությունները դեռ չեն սպառվել», հայտարարել է Իլհամ Ալիեւը` վերստին հակադրվելով, փաստորեն, միջազգային հանրությանը, ըստ որի` «ԼՂ հիմնահարցի կարգավորումն ունի բացառապես մեկ` խաղաղ ճանապարհով լուծում»: Թե ի՞նչ է նշանակում Ալիեւի այս հերթական «յաթաղանացումը» Մինսկի խմբի համանախագահների առաջարկած «նոր միջոցներին» ծանոթանալուց հետո, դժվար է ասել. Ալիեւը գնում է երրորդ նախագահությանը, հետեւաբար նա կարիք ունի «ամենաքաջարի ազերին, ու բոլոր ազերիների տիրակալը» երեւալուն: Մյուս կողմից, գուցե Ալիեւը նաեւ պատերազմը` որպես հիմնահարցի կարգավորման միջոց վեր հանելով, փորձում է միջնորդական կողմերին հասկացնել, որ «նոր միջոցները», որոնց մասին Մամեդյարովը նրան զեկուցել է, Ադրբեջանի համար ամենեւին էլ ընդունելի չեն:

Սպասենք Լավրով-Նալբանդյան հանդիպմանը:

## Դիտարկումներ

# Մեծ Եվրոպայի տեսլականը եւ խոչընդոտները դրա ճանապարհին

«Մեծ Եվրոպա՞: Օ, ո՜չ: Եվրոպայում այդ մասին քաղաքական մարդիկ չեն ուզում խոսել»,- ասաց ինձ հետ զրույցի ժամանակ մի ճանաչված եվրոպացի քաղաքական գործիչ երկու շաբաթ առաջ: «Բայց չէ՞ որ Մեծ Եվրոպայի գաղափարը ծնվել է Արեւմտյան Եվրոպայում եւ այսօր ունի շատ կողմներ եվրասիական տարածքում»,- հարցրի ես: «Այո՛, որպես գաղափար գոյության իրավունք ունի»,- հաստատեց զրուցակիցս: Վերջին ամիսներին Հայաստանում աշխուժացած ինտեգրացիոն հեռանկարներին վերաբերող քննարկումները ստեղծել են մի ուշագրավ վիճակ, երբ կարծես, փափկել եւ ավելի զուսպ են դառնում Եվրոպական միությունից եւ Ռուսաստանից լսվող ձայները՝ կապված Հայաստանի ինտեգրման հեռանկարների հետ: Փորձենք համադրել այդ բոլոր դատողությունները եւ վերլուծել այն իրավիճակը, որը ձեւավորվել է մեր իրականության մեջ վերջին ամիսների հասարակական քննարկումների արդյունքում: Որ այս թեման սկսել է իսկապես արդիական դառնալ, վկայում են տարաբնույթ հարցազրույցներն ու վերլուծականները, որոնք վերջին ամիսների ընթացքում անհամեմատ նույնպես շատացել են:

### Հայաստանի ընտրության իրավունքը

Ավելորդ չեմ համարում հիշեցնել, որ եվրոպական ինտեգրման գործընթացից Հայաստանն ակնկալում է մեր երկրի քաղաքական, տնտեսական, ֆինանսական, հասարակական եւ այլ ենթակառուցվածքների բարեփոխում եվրոպական չափանիշների համաձայն: Մենք ակնկալում ենք տնտեսական հարաբերությունների զարգացում Եվրոպական միության հետ, ֆինանսների, ծառայությունների եւ գաղափարների ազատ տեղաշարժի ոգով, ինչպես նաեւ վիզային ռեժիմի որոշակի դյուրացում, որն ինքնին դեռեւս վճռական գործոն չէ, բայց մյուս բաղադրիչների հետ որակական փոփոխությունների հնարավորություն կարող է ստեղծել: Վիլնյուսում այս տարվա նոյեմբերին կգումարվի «Արեւելյան գործընկերության» գագաթաժողովը, որտեղ հնարավոր է, որ Հայաստանը նախաստորագրի ասոցացման փաստաթուղթն՝ առնչվող Ազատ եւ համապարփակ առեւտրի գոտի ստեղծելու մասին: Մի քանի ամիս առաջ Եվրոմիությունն ու նրա երկրները ներկայացնող տարբեր գործիչներ ասում էին, որ Հայաստանը կանգնած է ընտրության առջեւ, եւ ինքը պետք է ընտրություն կատարի՝ ում հետ շարունակել խորացնել հարաբերությունները՝ Եվրոմիությա՞ն, թե՞ Մաքսային միության: Հայաստանում ծավալված քաղաքական, քաղաքագիտական եւ փորձագիտական (այդ թվում՝ տնտեսագիտական) քննարկումներից տեսակետների դաշտը բավական պարզվել էր, եւ մեզանում կարողացել են հիմնավորել մեր աշխարհաքաղաքական կարգավիճակից թելադրված այն մոտեցումը, որ Հայաստանն իրականում չի կարող հակադրել միմյանց ինտեգրման երկու ուղղությունները, որովհետեւ բազմաթիվ պատճառներով այդ հակադրությունը նույնիսկ ոչ թե մարտահրավեր, այլ ուղղակի սպառնալիք է մեր անվտանգության համար: Հասկանալի պատճառներով այս մոտեցումը, որն անդուլ կրկնում են մեր պաշտոնյաներն ու փորձագետները ամենատարբեր մակարդակներով, կարծես հասանելի եւ ընդունելի է սկսում դառնալ մեր քաղաքական գործընկերների համար: Հատկանշական է, որ Հայաստանում Եվրոմիության պատվիրակության ղեկավար Տրայան Հրիսթեան վերջերս, գուցե նաեւ իրեն շտկելով, ասաց. «Եվրոմիությունը չի դիտարկում Հայաստանի անդամակցությունը Եվրոմիությանը կամ Եվրասիական միությանը որպես միմյանց մրցակցություն»: Մյուս կողմից, նախորդ շաբաթվա ընթացքում լայնորեն լուսաբանվեց Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախարար Տատյանա Վալովայայի տեսակետը, որտեղ պարզ ասվում էր, որ Մաքսային միությունը դիտարկվում է որպես տնտեսական միջազգային կազմակերպություն, որն իր առջեւ քաղաքական խնդիրներ չի դնում, որովհետեւ դրա համար գոյություն ունեն միջազգային այլ ատյաններ, սկսած ՄԱԿ-ից: Նրա կարծիքով չկա հակասություն այն տարբեր երկրների համար, որոնք ուզում են խորացնել տնտեսական ինտեգրացիոն գործընթացները թե՛ Մաքսային միության, թե՛ այլ տնտեսական միջազգային կառույցների շրջանակներում: Անշուշտ, տիկին Վալովայան ներկայացնում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովը եւ դրա համար էլ լիազորված չէր տալու քաղաքական գնահատականներ: Սակայն այն պարզ տեսլականը, որ գալիք աշխարհը ոչ թե 200 պետություն-տնտեսական միավորների հարաբերությունների, այլ մոտ 20 վերազգային տնտեսական միավորների միջեւ հարաբերություններ են, պարզ խոսում է այն մասին, որ վերջին ամիսների ընթացքում կառավարչական ատյաններին է հասել աշխարհի առաջատար քաղաքագետների այն տեսական եզրակացությունը, որ բազմաբեւեռ աշխարհը թելադրում է գլոբալ մի քանի տնտեսաքաղաքական միավորումների պայքար-համագործակցություն, որոնցից մեկը կարող է լինել հետխորհրդային տարածքի վրա ձեւավորվող ապագա Եվրասիական միությունը:

Մեր խնդրանքով մի քանի հարգված տնտեսագետներ եւ քաղաքագետներ անցած երկու շաբաթների ընթացքում ուշադրությամբ ուսումնասիրեցին այն բաց փաստաթղթերը, որոնց համաձայն ընթանում է Հայաստանի եվրոպական ինտեգրումը: Նրանք միաձայն հաստատում են, որ ասոցացման համաձայնագրում ոչ մի բառ չկա այլ միությունների հետ ինտեգրումը արգելելու կամ բացառելու մասին: Այսպիսով, հարկ է, որ այս ճշմարտությունը տարբեր ատյաններում ներկայացվի այնպես եւ այնքան, որ բոլոր մակարդակների զրուցակիցներին հասնի այն պարզ ճշմարտությունը, որ եվրասիական ինտեգրման գործընթացին մասնակցելու եւ եվրոպական ինտեգրումը զարգացնելու միջեւ հակասություն փնտրելը Հայաստանի համար կարող է կործանարար հետեւանքներ ունենալ: Սա վստահ ասում եմ՝ ցանկանալով, որ Հայաստանի բոլոր ուղղությունների զրուցակիցները իսկապես մնեն մեր երկրի դրության մեջ, որը գտնվում է մասնակի շրջափակման եւ աշխարհաքաղաքական արտակարգ աննպաստ պայմաններում: Համոզված եմ, որ համագործակցված աշխատանքի դեպքում կարելի կլինի եւ պետք է ստանալ հավաստիացումներ Եվրոպական միության բոլոր մակարդակների պետական պաշտոնյաներից նման հակասությունը բացառելու վերաբերյալ: Իսկ եթե նման հավաստիացումները ուշանան, ապա պետք է դանդաղեցնել նաեւ քաղաքական համապատասխան գործընթացները:

### Արեւելյան գործընկերները Եվրոմիության եւ Ռուսաստանի միջեւ

Մինչեւ վերջերս մենք խոսում էինք այն մասին, որ Ուկրաինայի եւ Հայաստանի կարգավիճակները իրար բավական նման են, որովհետեւ երկուսն էլ փորձում են ամեն մեկը յուրովի համադրել եվրոպական ինտեգրումը եվրասիական ինտեգրմանը, փորձելով չփչացնել հարաբերությունները ո՛չ մեկի, ո՛չ էլ մյուսի հետ: Եվրոպական միության հայտնի տնտեսական դժվարությունները շատ մեծացրել են եվրոհոռետեսների բանակը: Վաշինգտոնի Փյուիի անվան հետազոտական կենտրոնի վերջերս արած հետազոտության համաձայն՝ եվրոպացիների մեծ մասը կարծում է, որ եվրոպական ինտեգրման գաղափարը վարկաբեկված է: Ընդ որում, Եվրոպական միությունից ամենագոհը գերմանացիներն են, իսկ ամենադժգոհը՝ ֆրանսիացիները: Բոլոր եվրոպացիները կարեւորագույն մարտահրավեր են համարում գործազրկությունը, իսկ գերմանացիները՝ նաեւ տարբերությունների մեծացումը հարուստների եւ աղքատների միջեւ: Այս պայմաններում Եվրոպական միության էական ընդլայնման մասին, անշուշտ, խոսք լինել չի կարող: Տարբեր աղբյուրներից տեղեկություններ են հասնում նաեւ այն մասին, որ Եվրոմիությունը չի պատրաստվում էական վարկեր կամ դրամաշնորհներ հատկացնել հարեւաններին տնտեսական դժվարությունների պատճառաբանությամբ: Մյուս կողմից՝ տեղեկություններ են հասնում, որ եվրոպաշտոնյաները գտնում են, որ Մոլդովան չի կատարում Արեւելյան գործընկերությամբ ստանձնած իր պարտավորությունները: Եվ ընդհակառակը, մոլդովացիների ճնշող մեծամասնությունը սկսել է դրական արտահայտվել Մաքսային միության վերաբերյալ եւ չի նշել ոչ մի բացասական հետեւանք այդ ճանապարհով գնալու դեպքում: Մեր եւ Ուկրաինայի պարագայում սկսել է գծագրվել մի էական տարբերություն, որը մեր օգտին է հետեւյալ իմաստով: Ուկրաինան մեծ պետություն է շատ մեծ շուկայով: Նրա հարկային եւ մաքսային ռեգլամենտները ուղղակիորեն կարող են ազդեցություն ունենալ տարածաշրջանային, տնտեսական եւ քաղաքական միավորումների համար: Հայաստանը փոքր երկիր է, անհամեմատ ավելի համեստ մասշտաբներով, եւ եթե մեր տարածաշրջանում քաղաքական էական փոփոխություններ չլինեն (օրինակ՝ բացվի հայ-թուրքական սահմանը կամ առաջընթաց նշմարվի Լեռնային Ղարաբաղի կարգավորման ուղղությամբ, կամ վերագործարկվի Աբխազական երկաթուղին եւ այլն), ապա դժվար թե Հայաստանի մասնակցությունից էական բան կախված լինի մաքսային կամ հարկային ռեգիոնալ վարչարարության տեսանկյունից: Ահա սա այն դեպքն է, որ եթե նույնիսկ Ուկրաինային իսկապես դնեն երկընտրանքի առջեւ, լինել Եվրոպական միության հետ, թե դառնալ Եվրասիական միության անդամ, տեսանելի հեռանկարում նման կոշտ երկընտրանքի առջեւ Հայաստանին կանգնեցնելը ուղղակի անտեղի դաժանություն է: Ուշադրությամբ հետեւելով Վրաստանում ընթացող գործընթացներին, մենք տեսնում ենք, որ շատ դանդաղ եւ զգուշորեն, բայց Վրաստանը եւս շարժվում է Ռուսաստանի հետ իր հարաբերությունները կարգավորելու ճանապարհով: Գիտականորեն հիմնավորված եւ կասկածից վեր է, որ Հարավային Կովկասի վերջին քսանամյակի անվտանգության ճարտարապետությունը խարսխված է ԱՄՆ-ի, Եվրոմիության եւ Ռուսաստանյան Դաշնության համագործակցային- մրցակցային պատասխանատվության վրա: Այսպիսով, եթե այս ճարտարապետությունը պետք է փոխվի, ապա հարկ կլինի փոխել նաեւ տարածաշրջանի բոլոր պետությունների քաղաքական հասկացությունների բառապաշարը:

### Գործնական եզրակացություններ ընթացիկ փուլի վերաբերյալ

Քանի որ տեսնում ենք, որ Եվրոմիության եւ Մաքսային միության հետ մեր երկրի հարաբերությունները զարգացնելու հարցում կամաց-կամաց ձեւավորվում է փոխըմբռնման դաշտ եւ մեր անելիքը որոշելու համար ստանում ենք ազատ ժամանակ, հարկ է շարունակել համախոհների եւ բարեկամների փնտրտուքը թե՛ Մոսկվայում եւ թե՛ Բրյուսելում: Քաղաքական մակարդակում անհրաժեշտ է, որ եվրոպաշտոնյաները մնեն Հայաստանի դրության մեջ եւ ականջալուր լինեն մեր դժվարություններին: Նույնը վերաբերում է մեր ռազմաքաղաքական դաշնակիցներին հետխորհրդային տարածքում: Ավելի լավ է ընթանալ մի փոքր դանդաղ, սակայն առանց վարանելու եւ առանց թույլ տալու, որ մեր դաշնակիցները կամ մեր գործընկերները մեզանից երես թեքեն: Նախնական տեղեկություններ կան, որ 2014 թ. Ռուսաստանի Դաշնութունը եւ Եվրոմիությունը մի մեծ համաձայնագիր կարող են ստորագրել համագործակցության նոր մակարդակի վերաբերյալ: Եթե նույնիսկ սա այն Մեծ Եվրոպան չէ, որը պետք է ծավալվի Լիսաբոնից մինչեւ Վլադիվոստոկ եւ որը Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի քաղաքական տեսլականն է, ապա այս մանր քայլերը կամաց-կամաց առաջ են մղում այդ մեծ գաղափարը:

Մեր քաղաքական դաշտում մենք մի մեծ կոնսենսուսի արդեն հասել ենք: Մենք հասկանում ենք, որ Մաքսային միության հետ համագործակցությունը, հավասարապես նաեւ Եվրոպական միության հետ ինտեգրման գործընթացները շարունակելը չեն կարող առաջացնել տարբեր կողմնորոշումների կողմնակիցների միջեւ առճակատում եւ այս խնդիրների լուծումը ընկած է բացառապես տնտեսական շահերի տիրույթում: Ուրեմն, շարունակելով մեր բաց եւ բարյացակամ, մեր ռազմաքաղաքական դաշնակիցների եւ գործընկերների հետ համագործակցային հարաբերությունները, մենք պետք է մեզ համար, մեր տնտեսագետների ջանքերով, իրարից անկախ, առնվազն մի քանի մասնագիտական եզրակացություններ ունենանք, որոնք կհամոզեն թե՛ մեր հասարակությանը եւ թե՛ արտաքին աշխարհին:

**ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ**
**Քաղաքական վերլուծաբան, բանասիրական գիտությունների թեկնածու**

# Ուկրաինան Եվրոմիության եւ Մաքսային միության միջեւ

*Ս. Գլազեւ. «Մաքսային միությանը մասնակցելը բացառում է մուտքը Եվրոմիություն»*

**Աստանայում՝ Բարձրագույն եվրասիական տնտեսական խորհրդի նիստում Ռուսաստանի, Բելառուսի եւ Ղազախստանի ղեկավարները համաձայնեցրել են Ուկրաինայի եւ Եվրասիական տնտեսական ընկերակցության համագործակցության խորացման հուշագրի տեքստը: Այդ ընկերակցության շրջանակներում է գործում Մաքսային միությունը: «Կոմերսանտ Ուկրաինա» թերթի տեղեկությունների համաձայն, փաստաթուղթը Կիեւին չի շնորհում Մաքսային միությունում (ՄՄ) դիտորդի պաշտոնական կարգավիճակ, քանի որ կանոնադրական փաստաթղթում նման կարգավիճակ չի նախատեսվում: Ապագայում պայմանագրերի մեջ գուցեեւ կատարվեն անհրաժեշտ փոփոխություններ: ՄՄ անդամ երկրները մայիսի 29-ին խոստացան Եվրասիական տնտեսական միության ստեղծման ժամանակ Ուկրաինային վերապահել հատուկ կարգավիճակ: Եվրասիական տնտեսական միությունը կունենա ՄՄ-ի համեմատությամբ ինտեգրման ավելի բարձր աստիճան:**

**Աստանայի գագաթաժողովին մասնակցում էր Ուկրաինայի նախագահի Վիկտոր Յանուկովիչը, որը ստիպված էր խուսանավել Եվրոմիության եւ Մաքսային միության միջեւ: ՌԴ նախագահի խորհրդական, Եվրասիական տնտեսական ընկերակցության գլխավոր քարտուղարի տեղակալ Սերգեյ Գլազեւը անքող կերպով հայտարարեց, որ դիտորդի կարգավիճակը կփակի Ուկրաինայի ճանապարհը դեպի Եվրոմիություն: Ամեն դեպքում դա դժվարացնում է ԵՄ-ի հետ Ուկրաինայի գործընկերային հարաբերությունները:**

**«Մենք ողջունում ենք Ուկրաինայի ցանկությունը՝ վերադառնալու եվրասիական ինտեգրման պրոցես, որից նա դուրս էր մնացել «նարնջագույն հեղափոխությունից» հետո», հայտարարել է Գլազեւը բանակցությունների ավարտից հետո: Ավելի ուշ РБК daily էլեկտրոնային հրատարակությանը տված հարցազրույցում նա պարզաբանել է. «Ուկրաինայի հասարակայնության համար կարեւոր է հասկանալ, որ Մաքսային միությանը մասնակցելը բացառում է մուտքը Եվրոմիություն»:**

**Մոսկովյան «Կոմերսանտ» թերթը մեջբերում է Գլազեւի հետեւյալ խոսքերը. «Դիտորդի կարգավիճակ շնորհվում է լոկ այն պետություններին, որոնք ուզում են մտնել մեր ինտեգրացիոն միավորման մեջ: Քանի որ մենք պայմանավորվեցինք Ուկրաինային դիտորդի կարգավիճակ տալ նոր-նոր ձեւավորվող Եվրասիական տնտեսական միությունում, դա ցույց է տալիս այդ միության մեջ մտնելու Ուկրաինայի մտադրությունը»:**

ԲԵՔՈՒ

# Իլհամ Ալիեւն իրեն ապահովագրո՞ւմ է

Այսօր Ադրբեջանի Միլլի մեջլիսը քննության կառնի երկու օրենսդրական փոփոխություններ, որ վերաբերում են էքս-նախագահին: Առաջին փոփոխությամբ արգելվում է, որ դատարանները էքս-նախագահի եւ նրա տիկնոջ դեմ քաղաքացիական հայց քննության առնի, եթե դա կվերաբերի պետության կողմից տրվող թոշակից կամ սոցիալական արտոնություններից ֆինանսական փոխհատուցումներ վճարելուն:

Ադրբեջանական օրենսդրությունն այսպիսով էքս-նախագահին եւ նրա կնոջը տրվող պետական թոշակն ու սոցիալական արտոնությունները դարձնում է անձեռնմխելի նույնիսկ այն դեպքում, եթե պետության նախկին ղեկավարը որեւէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ հարաբերություններում կատարել է քայլեր, որոնց հետեւանքով վերջիններս նյութական կամ բարոյական վնաս են կրել եւ կարող են փոխհատուցման քաղաքացիական հայցով դիմել դատարան:

Երկրորդ օրենսդրական փոփոխությունը վերաբերում է էքս-նախագահին եւ նրա կնոջը ցմահ դիվանագիտական անձնագիր տրամադրելուն: Պետք է նկատել, որ անցյալ տարի ընդունված «Նախկին նախագահի մասին» օրենքում այս դրույթներն ամրագրված են ընդհանուր ձեւակերպումներով:

Ինչպես հայտնի է, Ադրբեջանում էքս-նախագահի կարգավիճակ տրվել է Այազ Մութալիբովին, իսկ նախկին նախագահի կնոջ համար սահմանված արտոնություններից օգտվում է ե՛ւ Մութալիբովի, ե՛ւ Էլչիբեյի կինը: Վերջինս պարբերաբար խնդիրներ է ունենում Բաքվի քաղաքային իշխանությունների հետ՝ կոմունալ վճարումների պատճառով: Այդ մասին վերջերս մամուլին ահազանգել էր Էլչիբեյի որդին:

Այնպես որ, եթե օրենքն ընդունվի, ապա էքս-նախագահի այրին կարող է որոշակիորեն ապահովագրված զգալ, որ կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունները դատարան դիմելու դեպքում չեն կարող պետական նպաստի վրա արգելանք դնելու եւ այդ կերպ գազի կամ էլեկտրաէներգիայի դիմաց կուտակված պարտքերը փոխհատուցելու պահանջ ներկայացնել:

Այդուհանդերձ, հազիվ թե օրենսդրական փոփոխություններ արվում են հանուն Մութալիբովի կամ Էլչիբեյի այրու: Մանավանդ այն մասով, որ վերաբերում է նախկին նախագահին եւ նրա կնոջը ցմահ դիվանագիտական անձնագիր տրամադրելուն: Վերջին շրջանում ավելի ու ավելի համառորեն է խոսվում Ադրբեջանում «պետական հեղաշրջում իրականացնելու հավանականության» մասին:

Որոշ աղբյուրներ չեն բացառում, որ Իլհամ Ալիեւը երրորդ ժամկետով չառաջադրվի նախագահի թեկնածու՝ տեղը զիջելով Մեհրիբան Ալիեւային: Ոչինչ բացառելի չէ, ուստի հավանական է, որ օրենսդրական հատկապես երկրորդ փոփոխությունը կատարվում է, որպեսզի ինչ-որ ֆորսմաժորային իրավիճակում Իլհամ Ալիեւը ցմահ օժտված լինի դիվանագիտական անձնագրով:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Վագըֆլը՝ հայկական վերջին գյուղը կդատարկվի

**«Ապագայ» ազգային, մշակութային եւ հասարակական շաբաթաթերթն (Կանադա) իր ապրիլի 29-ի համարում «Մարմարայից» արտատպելով հրատարակել է Սենդի Ջենտիլեձոյի (www.balcanicancaso.org) հոդվածը՝ իտալերենից արեւմտահայերենի թարգմանված Օշին Էլակեոզի կողմից: Ստորեւ՝ հոդվածի արեւելահայերեն սեղմ տարբերակը:**

Մուսա լեռան հովիտների մեջ թաղված, արեւի ճառագայթներով փայփայած հողաշերտի վրա է գտնվում մի փոքրիկ գյուղ, շրջապատված նարնջի անտառներով, որտեղ կյանքը դեռ շարունակվում է ընթանալ իր նախկին կշռույթով ու խանդավառ ժողովրդական տոնախմբություններով: Համայնքային կյանքի համերաշխությունը դեռ չի լքել գյուղի ավագ բնակիչներին, բայց նոր սերնդին դա ամենեւին էլ ապագա չի խոստանում:

Վագըֆլը գյուղը Թուրքիայում կանգուն մնացած վերջին հայկական օրրանն է, որն ունի հազիվ 130 հոգանոց մի համայնք: Սա ամբողջ երկրում մնացած մի քանի տասնյակ հազար հայ բնակչության փոքրիկ մի մասն է, չնչին մի մասը՝ եթե հաշվի առնենք, որ մեկ դար առաջ նույն տարածաշրջանում ապրում էին մոտավորապես երկու միլիոն հայեր:

Մուսա լեռը, այսինքն՝ Մովսեսի լեռն իր շվաքի տակ էր պահում նաեւ եւս հինգ հայկական գյուղեր, որոնք, չդիմանալով կատաղությանց ու բռնություններին, ջնջվեցին ամբողջովին 1915-ի աղետալի օրերին: Վերապրողներից շատերը փոխադրվեցին Լիբանան: Միայն այս փոքրիկ ավանի բնակիչները, ծվարած լեռան ստորոտին, շարունակեցին իրենց գոյատեւման պայքարը՝ մեկ ձեռքում պահելով մի նարինջ, իսկ մյուսում՝ մեկ բաժակ օղի: Նրանք իրենց առօրյա աշխատանքով ցույց տվեցին մեզ իրենց հոգիներում տեղ գտած եռանդն ու կորովը, ապրելու կամքը, որը պարուրված է անկատար երազներով եւ հարազատ ծննդավայրը ստիպողաբար թողնելու պարտավորվածությամբ:

Բնակչության իմաստությունն ու ավանդությունների հարգանքը շղթայի օղակների նման միացնում են մեկը մյուսին, անկախ մշակութային, կրոնական կամ մտածելակերպի տարբերություններից: Սրա լավագույն օրինակը Մեհմեդն է, իսլամ կրոնը դավանող մի թուրք, որն աջակցում է Ազգայնական շարժում կուսակցությանը, բայց ծնվել է Վաքըֆ գյուղում, որտեղ բնակվում է մինչ օրս: Իր մանկության բոլոր ընկերները հայեր են, ուստի ինքն էլ հայերեն է խոսում: Իր թլփատման արարողության կնքահայրն անգամ հայ է եղել:

Վաքըֆ գյուղի երկհարկանի տների դռները միշտ բաց են բոլորի առաջ, լինեն նրանք տեղի բնակիչ, զբոսաշրջիկ թե լրագրող: Այդ տներում բնակվում են հիմնականում երեք-չորս զավակների հետ ընտանիքներ: Նոր սերունդը, որքան էլ պարտք զգա իր արմատներով, ստիպված է գաղթել, մի մասը ավելի լավ ապագայի ակնկալիքներով, մյուսները՝ ուսում ստանալու: Որոշ մասն էլ մայրենի լեզուն սովորելու նպատակով մեկնում է Պոլիս, որովհետեւ միայն այդ տեղի հայկական վարժարաններում է, որ կարող են հայոց լեզվի դասընթացներին հետեւել: 12 տարի է, ինչ գյուղում ամուսնություններ չեն գրանցվել:

Ապագան հույսեր չի ներշնչում: Այդ պատճառով էլ գյուղը օրեցօր դատարկվում է, թեեւ մեկնողները հույսեր են փայփայում, որ մի օր վերադառնալու են իրենց մայրենի օջախը:

Տասնհինգ տարեկան Մելինեն ցանկանում է հոգեբան դառնալ: Ուսանում է Պոլսում: Գյուղում աշխատանքի հնարավորությունները խիստ սահմանափակ են: Նարնջենիներով լեցուն հովիտները հպարտություն պատճառում են, սակայն բավարար եկամուտ չեն ապահովում:

Այդուհանդերձ հուսահատությունը չի պատում բոլորին: Ուսումը նոր ավարտած Վիգենն, օրինակ, վճռել է մնալ գյուղում, զարգացնել իր ծննդավայրը: Անշուշտ, մյուս կողմից, դեմքին դառնության ծանր արտահայտություններով, հույս ունի, որ Վաքըֆ գյուղը շարունակելու է մնալ Թուրքիայի միակ հայկական գյուղը, կորցնելով հանդերձ իր «հատկություններից շատերը»: Իսկ Մելինեն, որ ուսանողուհի է Պոլսում, բացատրում է, որ 2062 թվականին, երբ թոշակի անցնի, վերադառնալու է Վաքըֆ գյուղ: Նա հույս ունի, որ մինչ այդ գյուղը փոխակերպվելու է, դառնալու է բարգավաճ եւ զբոսաշրջիկների համար գրավիչ ու հետաքրքրական:

Հ. Ծ.

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՌԱԶԻՆՈՒՄ

# Սիրիական ընդդիմությունը նշեց Ժնեւի կոնֆերանսին մասնակցելու պայմանները

*C-300-ների առաջին խմբաքանակը Սիրիայում*



**Սիրիական ընդդիմության գլխավոր կազմակերպությունը՝ Ազգային կոալիցիան, հրապարակել է Ժնեւում սիրիական հակամարտության հարցերին նվիրված հունիսյան կոնֆերանսին իր մասնակցության պայմանները: Ընդդիմադիրները պահանջում են, որ կոնֆերանսում որոշվեն Սիրիայի հակամարտության ավարտման եւ նախագահ Բաշար Ասադի պաշտոնաթողության ժամկետները:**

**Ազգային կոալիցիայի տարածած հայտարարության մեջ նաեւ ասվում է, որ կազմակերպությունը ողջունում է հակամարտության քաղաքական կարգավորմանն ուղղված միջազգային ջանքերը: Ընդդիմադիրները զինված բախումների ավարտման գլխավոր պայման են համարում Ասադի, ինչպես նաեւ զինվորական հրամանատարության եւ անվտանգության ուժերի վերնախավի հրաժարականը:**

**Ռոյթեր գործակալությունը նշում է, որ կոալիցիայի հայտարարությունն արվել է ներքին տարաձայնությունների պայմաններում: Ներկայումս կազմակերպության մեջ մտնող 60 անդամները ներկայացնում են սիրիական ընդդիմության առավելապես իսլամիստական թեւը: Արեւմուտքի երկրների պահանջով կոալիցիայի ընդլայնմանը եւ ազատական շարժումների ներգրավմանը ուղղված բանակցությունները առայժմ արդյունք չեն տալիս:**

**Նախագահ Բաշար Ասադի վարչակազմը մայիսի 30-ին արձագանքել է ընդդիմության հայտարարությանը: Արտգործնախարար Վալիդ Մուալլեմը նշել է, որ Բաշար Ասադը կպաշտոնավարի մինչեւ սահմանված ժամկետի ավարտը. նախագահական լիազորությունները ավարտվում են 2014-ին:**

**Ժնեւի հաշտության կոնֆերանսը նախաձեռնել են Ռուսաստանը եւ ԱՄՆ-ը: Պաշտոնական Դամասկոսը պատրաստակամություն է հայտնել դրան մասնակցելու առանց նախապայմանների:**

**Ինչ վերաբերում է մի քանի տարի առաջ կնքված ռուս-սիրիական ռազմական գործարքին, նախագահ Ասադը լիբանանցի շիա արմատականների «Հզբոլլահի» խմբավորմանը պատկանող «Ալ Մանար» հեռուստաալիքին տված հարցազրույցում ասել է, որ ռուսական C-300 հակաօդային համալիրների առաջին խմբաքանակն արդեն հասցվել է Սիրիա: Ասադի հարցազրույցը հեռուստաեթերում ցուցադրվել է մայիսի 30-ին: Նախագահի խոսքերով, մոտ ժամանակներս C-300-ների առաքումները պետք է ավարտվեն: Ասադն ավելացրել էր, որ Սիրիայի բանակը պատրաստ է պայքարել ներքին եւ արտաքին սպառնալիքների դեմ եւ մասնավորապես հետ մղել օդային գրոհները:**

**Ավելի վաղ՝ մայիսի 28-ին, Իսրայելի պաշտպանության նախարար Մոշե Յաալոնը հայտարարել էր, որ Սիրիայի համար նախատեսված C-300-ները դեռ Ռուսաստանի տարածքում են:**

# Տաշքենդում կբացվի ՆԱՏՕ-ի գրասենյակ



**ՆԱՏՕ-ի զորքերը որոշել են իրենց միջինասիական գրասենյակը Աստանայից տեղափոխել Տաշքենդ: Պաշտոնապես տեղափոխությունը կապում են պլանային հերթափոխության հետ, բայց Ինտերֆաքս գործակալությունը ենթադրում է, որ ՆԱՏՕ-ն փորձում է մոտենալ Աֆղանստանին, քանզի շուտով սկսվում է այնտեղից զորքի դուրսբերման վճռական փուլը:**

**Տաշքենդում ՆԱՏՕ-ի գրասենյակի բացմանը մամուլը վերջերս անդրադարձավ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) գագաթաժողովի կապակցությամբ, որին Ուզբեկստանը չմասնակցեց, քանի որ գրեթե մեկ տարի առաջ կասեցրել էր իր անդամակցությունը ՀԱՊԿ-ին: Մինչդեռ Ղազախստանը մնում է կազմակերպության գործող անդամ:**

**ՆԱՏՕ-ի նոր գրասենյակը Տաշքենդում կունենա դիվանագիտական ներկայացուցչության կարգավիճակ: Այն կգլխավորի ՆԱՏՕ-ի երկրներից մեկի քաղաքացի. այդ սպայի անունը չի հրապարակվում: Գրասենյակի կամ շտաբի գլխավոր խնդիրը կլինի շփումների համակարգումը Ուզբեկստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի եւ Թուրքմենստանի հետ: Ի դեպ, այդ հինգ երկրներից երեքը ՀԱՊԿ անդամներ են:**

**2004-ին ՆԱՏՕ-ի Ստամբուլյան գագաթաժողովում դաշինքի երկրների պետությունների ու կառավարությունների ղեկավարները Կենտրոնական Ասիան բնորոշեցին որպես ռազմավարական կարեւոր շրջան: Որոշվեց այնտեղ նշանակել ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչի, որը տարածաշրջանում առաջ կտանի դաշինքի քաղաքականությունը:**

**«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ»**

# «Հորտուս Մուզիկուսը» խումբը շուտով Հայաստանում

Հունիսի 12-14 «Երեւանյան հեռանկարներ» 14-րդ միջազգային երաժշտական փառատոնը կներկայացնի համերգների շարք էստոնական «Ժողովրդական դիվանագիտության առաքելություն» կազմակերպության հետ համատեղ:

2013-ի «Երեւանյան հեռանկարները» խոստումնալից բացեց իր թվով 14-րդ համերգաշրջանը ապրիլի 11-ին Վիեննայի ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգով: Ինչպես «**Ազգ**»-ի հետ զրույցում ասաց փառատոնի մենեջեր **Սոնա Հովհաննիսյանը**, իրենց փառատոնն ունի յուրահատկություն՝ համերգները բաժանվում են ըստ տարվա ամիսների. «Մենք ունենք գարնանային եւ աշնանային համերգաշար, քանի որ մենք ունենք մեր նշանողը՝ հրավիրել մեգաաստղերի»:

Հունիսի 12-ին տեղի կունենա միջնադարյան երաժշտության կատարող լավագույն խմբերից մեկի՝ «Հորտուս Մուզիկուսը»-ի համերգը: Ի դեպ, կան ստանդարտներից ավելի ծավալուն ծրագիր է լինելու. «Համերգին մասնակցելու են նաեւ ծագումով ռուս թավջութակահար Բորիսլավ Ստրուլեւը, ուկրաինացի դաշնակահար Ալեքսեյ Բոտվինովը, էստոնացի երգիչ Տենիս Մյագին եւ Հայաստանի պետական կամերային նվագախումբը:

Հունիսի 12-ին կայանալիք համերգի տոմսերը կարժենան 2000-20 000 դրամ: Իսկ հունիսի 13-ին Էստոնիայի ազգային տղամարդկանց 50-հոգանոց երգչախումբը համերգային ծրագրով կմեկնի Վանաձոր:

«Այս երգչախումբն աշխարհի լավագույն երգչախմբերից մեկն է համարվում, ինչը փաստում է նրանց 2004 թ. ստացած «Գրեմմի» մրցանակը:

Արդեն հունիսի 14-ին նույն ծրագրով հանդես կգան «Արամ Խաչատրյան» համերգասրահում:

Ինչպես «Հորտուս Մուզիկուսի», այնպես էլ Էստոնիայի ազգային տղամարդկանց երգչախմբի ծրագ-



խումբը 2007-ին «Երեւանյան հեռանկարներ» փառատոնի շրջանակներում ելույթ է ունեցել Հայաստանում եւ միակ խումբն է, որը 40 տարվա մեջ երբեւէ չի դադարեցրել իր գործունեությունը հնագույն երաժշտության ներկայացման ոլորտում:

Սոնա Հովհաննիսյանը ավելացրեց. «Հորտուս Մուզիկուս» խումբը պարզապես կատարողական խումբ չէ, այլ՝ ինստիտուտ, որտեղ ուսումնասիրում են, մարդկանց ուշադրությանը ներկայացնում հնագույն երաժշտության գաղտնիքները»: «Երեւանյան հեռանկարներ» փառատոնի մենեջերն ընդգծեց նաեւ, որ խումբն իր հետ գործիքներ է բերելու Հայաստան, որոնք միջնադարյան պալատական նվագարաններ են: Ցուցահանդես են նաեւ իրենց հագուստները, որոնք նույնպես այդ դարաշրջանի են:

Համերգին մասնակցելու է նաեւ էստոնացի երգիչ Տենիս Մյագին, որը կներկայացնի հոգեւոր երաժշտություն, իսկ Անդրես Մուստոնենը կղեկավարի համերգը, սակայն կներկայանա նաեւ որպես ջութակահար:

Ինչպես զրույցում նշեց Սոնա Հովհաննիսյանը, շատ խայտաբղետ համերգ է ստացվելու, քանի որ սովորարում կան հայկական կատարումներ, որոնք իրենց ծրագրի մի մասն են կազմում, այլ ոչ թե հատուկ Հայաստան այցի համար են նախատեսված:

Անդրադառնալով փառատոնի ապագա ծրագրերին՝ Ս. Հովհաննիսյանը նշեց, որ Երեւան կայցելեն Դմիտրի Խվորոստովսկին եւ Կոնստանտին Օրբելյանը, «Շանհայ» լարային քառյակը, Յուրի Բաշմետը (ում 60-ամյակին նվիրված համերգներ են այս տարի գրեթե բոլոր երկրներում անցկացվում) եւ «Մոսկվայի մենակատարներ» կամերային նվագախումբը:

Փառատոնային տարին կեզրափակվի լեգենդար դիրիժոր Կլաուդիո Աբադոյի եւ «Մոցարտ» նվագախմբի այցով, որով եւ կեզրափակվի 2013-ի համերգաշարը. համերգը տեղի կունենա դեկտեմբերի 7-ին եւ կնվիրվի Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակին:

2014-ին «Երեւանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնի 15-ամյակն է լրանում, որի առիթով շքեղ համերգներ կկազմակերպվեն:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Ժիրայր Փափազյանը ֆրանսիական ֆիլմերում



*Ժիրայր Փափազյանը «Բարկո» սերիալի իր խաղընկերների հետ*

«Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ այս տարվա մայիսի 1-ից Ֆրանսիայի կինոդահլիճներում հաջողությամբ ցուցադրվում է «Մոհամեդ Դյուբուա» խորագրով ֆրանսիական ֆիլմը, որտեղ գլխավոր դերակատարի հորեղբոր դերով հանդես է գալիս ճանաչված դերասան եւ ռեժիսոր, հայկական օպերաների մեծ գիտակ եւ տարածող Ժիրայր Փափազյանը: Գլխավոր դերը կատարում է Էրիկ Ժյուդորը, որը ֆրանսիացիներին ծանոթ է «Էրիկը եւ Ռամզին» շոու ծրագրից: Ֆիլմի ռեժիսորն է Էռնեստ Օնան, պրոդյուսերը՝ Մանուել Մունզը: Ըստ քննադատների՝ «Փափազյանի հետաքրքրական ու զվարճալի դերը անմոռանալի տպավորություն է թողնում»:

Բացի վերոնշյալ գեղարվեստական լիամետրաժ ֆիլմից, Փափազյանը միացել է նաեւ արդեն իր երրորդ եթերաշրջանը սկսող «Բարկո» հեռուստասերիալի խմբին: Ժողովրդականություն վայելող այդ սերիալը 2012-ին Նյու Յորքի միջազգային կինոփառատոնում արժանացել էր «Էմմի» մրցանակի: Սերիալը, որի հեղինակն է Օլիվիե Մարշալը, ցուցադրվում է ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ Կանադայում եւ Ավստրալիայում: Փափազյանը դրանում խաղում է թուրք գանգստեր «Բաբա Արուճի» պտանգավոր դերը: Նա հանդես է գալիս սերիալի երրորդ եթերաշրջանի ավարտին, բայց շարունակելու է նաեւ նկարահանվել հաջորդ՝ չորրորդ եթերաշրջանում: Սերիալում նրա խաղընկերներն են միջազգային հեղինակության այնպիսի աստղեր, ինչպիսիք են Ժան-Հյուգ Անգլադը, Նիկոլա Դյուվանշելը, Քերոլ Ռոշեն եւ Ժոզեֆ Մալերբան: Սերիալի ռեժիսորն է Մանուել Բուրսինակը:



*Ժ. Փափազյանը Ջեոֆրի Թիեբոյի հետ*

Զափազանց զբաղված լինելով ֆրանսիական կինոներում, Փափազյանը այդուհանդերձ չի մոռանում հայկական օպերաների եւ պիեսների հանդեպ իր կրքոտ նվիրվածությանն ու անսպառ հետաքրքրասիրության մասին: Նա շարունակում է հայկական օպերաները օտարներին ծանոթացնելու շնորհակալ աշխատանքը: Ուրախությամբ պետք է նշել, որ 2010-ին Մարսելում եւ Փարիզում մեծ հաջողությամբ բեմադրվելուց հետո, Տիգրան Չուխաջյանի «Լեբլեբիջի Հորհոր աղան» (Կարինե) առաջիկա նոյեմբերի 9-ին եւ 10-ին դարձյալ բեմ է բարձրանալու Մարսելի «Օդեոն» հեղինակավոր թատրոնում:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

# «Հայաստանի փոքրիկ երգիչների» հերթական ելույթը



Այս յուրօրինակ հրաժեշտ համերգը նվիրված էր երգչախմբի բարեկամ, Հայաստանում Շվեյցարիայի դեսպան Կոնստանտին Օբոլենսկուն եւ իր ընտանիքին, որոնք շուտով հրաժեշտ են տալու մեր երկրին դիվանագիտական առաքելության ավարտի կապակցությամբ:

Հանդիսատեսը, որն արդեն վաղուց բարձր է գնահատում երգչախմբի ելույթները, այս անգամ ականատես եղավ հերթական նորամուծության: «Հայ փոքրիկ երգիչներ» միջազգային ասոցիացիան ստեղծել է նոր խումբ, որտեղ երեխաները նվագում են Presbyterian եկեղեցու եւ ամերիկացի դիրիժոր, շեփորահար, Azusa Pacific համալսարանի պրոֆեսոր Դոնավոն Գրեյի միջոցով նվիրած զանգերով: Ընդամենը տասը փորձերի ընթացքում երեխաները պատրաստեցին տասնհինգ ստեղծագործություն: Դոնավոն Գրեյը, որը մոտ 30 տարի ԱՄՆ-ում ղեկավարել է տարբեր զանգերի երգչախմբեր, հիացած էր «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի սաների՝ ծրագիրն այդքան արագ յուրացնելու կարողությամբ եւ նշեց, որ նույն ոգեւորությամբ եւ հիացմունքով ներկա կգտնվի երգչախմբի Շվեյցարիայում սպասվող համերգներին:

# «Հայկական գանձերի ժառանգություն»

Միչիգանի Ալեք եւ Մարի Մանուկյան թանգարանի նախաձեռնությամբ Մ. Նահանգներում լույս է տեսել «A Legacy of Armenian Treasures» (Հայկական գանձերի ժառանգություն) խորագրով 336 էջ եւ 250 գունավոր լուսանկարներ պարունակող հատորը, որտեղ ներկայացված են թանգարանի ավելի քան 150 ցուցանմուշները, հակիրճ նկարագրական տեղեկություններով: Ցուցանմուշների արվեստագիտական եւ մշակութային արժեքների մասին գրքում իրենց հեղինակավոր խոսքն են ասել ինը մասնագետները: Գրքի գործադիր խմբագիրն է հայտնի մտավորական Երվանդ Ազատյանը, խմբագրական համադրողը՝ Սիլվի Մերյանը, իսկ ընդհանուր համադրողը՝ Լյուսի Արդաշը:

Միչիգանի Ալեք եւ Մարի թանգարանը խոշորագույն գանձարանն է Հայաստանից դուրս գտնվող հայկական արվեստի եւ հուշանմուշների, ներառյալ ձեռագիր մատյանների, հնագույն գորգերի, զգեստների, մետաղադրամների եւ նկարների:

«Մենք երկար ժամանակ անկախ պետականություն չենք ունեցել, բայց մեր հոգեւորականները, բանաստեղծներն ու արվեստագետները ստեղծագործել են եւ որպես ժառանգություն թողել արտակարգ գեղեցիկ արվեստի գործեր: Դա ապացուցում է, որ ինքնությունը պահպանելու դեպքում կարելի է նաեւ վերապրել ու ծաղկել օտար տիրապետությունների ներքո: Այս հատորը կենդանի վկայությունն է այդ բոլորի», նշել է այս առթիվ Ռոնալդ Գրիգոր Սյունին, Միչիգանի համալսարանից:

Նորընծա գիրք-ալբոմի մասին ավելի մանրամասն՝ առաջիկա մեր մշակութային հավելվածում:

Հ. Ծ.

# Հունիսի 6-ին Մոսկվայում ծաղիկներ կդրվեն Արամ Խաչատրյանի հուշարձանին

Ռուսաստանի հայերի միությունը եւ ՌԴ կոմպոզիտորների միությունը հունիսի 6-ին Մոսկվայում կկազմակերպեն մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի (1903-1978) հուշարձանին ծաղիկներ դնելու արարողություն: Դա մեր մեծ հայրենակցի ծննդյան օրն է: Արարողությունը տեղի կունենա Բրյուսովի նրբանցք, թիվ 10-ում՝ Կոմպոզիտորների տան մերձակա պուրակում (մետրոյի «Օխոտնի ռյադ» կայարան):

# Դմիտրի Քյոսայանցի հուշ-երեկո Մոսկվայում

Հունիսի 6-ին Ռուսաստանի հայերի միությունում տեղի կունենա հայտնի կինոբեմադրիչ Դմիտրի Քյոսայանցի հիշատակին նվիրված երեկո:

Կցուցադրվեն «Սիրո ալիք» (Սոնա եւ Արմեն Հովհաննիսյանների դուետ) եւ «Կարմիր նուռ» (Արմեն Հովհաննիսյան) երգերի տեսահոլովակները: Նաեւ տեղի կունենա «Դմիտրի Քյոսայանց: Առաջին ծանոթություն» կինոֆիլմի պրեմիերան: Սցենարի հեղինակն է Արմեն Վաթյանը, բեմադրիչ ռեժիսորը եւ պրոդյուսերը՝ Ալեն Մենուան, բեմադրող օպերատորը՝ Աշոտ Մկրտչյանը:

Սկիզբը՝ ժամը 19-ին:

Հասցեն՝ մետրոյի «Դոստոեւսկայա» կայարան, Խորհրդային բանակի փողոց, տուն 8:

# Մխիթարյանն Ուկրաինայի առաջնության լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել




Ուկրաինական «Команда» թերթի անցկացրած հարցման արդյունքներով Հայաստանի հավաքականի եւ Դոնեցկի «Շախտյորի» հարձակվող Հենրիխ Մխիթարյանը ճանաչվել է երկրի առաջնության լավագույն ֆուտբոլիստ: Նա վաստակել է 75 միավոր: 2-րդ տեղը 38 միավորով զբաղեցրել է Կիեւի «Դինամոյի» ֆուտբոլիստ Անդրեյ Յարմոլենկոն: 3-րդ տեղում Կլեյսոն Խավիերն է («Մետալիստ»)՝ 29 միավոր: Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցրել նաեւ Ֆեռնանդինյոն («Շախտյոր»)՝ 26, Բրաուն Իդեյեն («Դինամո»)՝ 21, Ռոման Զոզուլյան («Դնեպր»)՝ 19, Վիլիանը («Շախտյոր»)՝ 18, Մարկո Դեւիչը («Մետալիստ»)՝ 16, Եվգենի Կոնոպլյանկան («Դնեպր»)՝ 16 եւ Ռուսլան Ռոտանը («Դնեպր»)՝ 15:

Հիշեցնենք, որ թերթն Ուկրաինայի պրեմիեր լիգայի թիմերի մարզիչների ու ավագների, ինչպես նաեւ լրագրողների միջեւ հարցում է անցկացնում՝ որոշելու յուրաքանչյուր ամսվա լավագույն ֆուտբոլիստին: Իսկ առաջնության ավարտից հետո ամփոփվում են արդյունքները՝ գումարելով յուրաքանչյուր ամիս ֆուտբոլիստի ստացած միավորները:

Մայիս ամսվա արդյունքներով Մխիթարյանը 12 միավորով գրավել է 2-րդ տեղը, իսկ լավագույնն է ճանաչվել «Մետալիստի» հարձակվող Մարկո Դեւիչը՝ 16 միավոր: Լավագույն եռյակը եզրափակել է «Դնեպրի» հարձակվող Ռոման Զոզուլյան՝ 7 միավոր:

Հատկանշական է, որ «Շախտյորի» ներկայացուցիչները չեն մասնակցում այդ հարցմանը՝ բոյկոտելով այն:

Ընթացիկ մրցաշրջանը Հենրիխ Մխիթարյանի ֆուտբոլային կարիերայում կարելի է լավագույնը համարել: Նա 3-րդ տարին անընդմեջ «Շախտյորի» կազմում դարձավ Ուկրաինայի չեմպիոն եւ գավաթակիր, 25 գնդակով ճանաչվեց լավագույն ռմբարկու՝ գերազանցելով Սերգեյ Ռեբրովի եւ Մաքսիմ Շացկիխի արդյունավետության ռեկորդը: Մխիթարյանի համար եւս 25 գոլ խփելն անձնական ռեկորդ է: Մնում է, որ Մխիթարյանն արդյունավետության ռեկորդ սահմանի նաեւ Հայաստանի ազգային հավաքականում, որի կազմում առայժմ նրա հաշվին 10 գոլ է գրանցված: Ինչպես հայտնի է, ՀՀ հավաքականի ռեկորդակիրն Արթուր Պետրոսյանն է, որը ազգային թիմում անցկացրած 69 հանդիպումներում 11 գոլի հեղինակ է դարձել: Հուսանք, որ Մալթայի եւ Դանիայի հավաքականների հետ ընտրական մրցախաղերից հետո Մխիթարյանը կդառնա Հայաստանի հավաքականի լավագույն ռմբարկուն:

# Հայաստանցի հրաձիգների համեստ արդյունքները



Մյունխենում կայացած գնդակային հրաձգության աշխարհի գավաթի հերթական փուլի մրցումներին մասնակցեցին 78 երկրների շուրջ 700 հրաձիգներ: Հայաստանից կրակագիծ դուրս եկան 4 հրաձիգներ, որոնք մրցեցին միայն հրացանից հրաձգությունում: Մեր մարզիկները համեստ արդյունքներ գրանցեցին ու չկարողանալով մտնել եզրափակիչ փուլ, ավարտեցին ելույթները:

Առավել հաջող էր Հրաչ Բաբայանի ելույթը, որը օդամղիչ հրացանով 10 մետրից հրաձգությունում վաստակելով 620,1 միավոր, զբաղեցրեց 46-րդ հորիզոնականը: Հայաստանի դրոշի ներքո առաջին անգամ հանդես եկող գերմանացի հրաձիգ Քրիստիան Լաուերը 613 միավորով գրավեց 93-րդ տեղը: Հիշեցնենք, որ Քրիստիանը վերջերս է ամուսնացել հայ հրաձգուհի Իրինա Աղաջանյանի հետ եւ բնակություն է հաստատել Հայաստանում: Նրա կինը 126 մարզուհիների մրցավեճում 410,8 միավորով գրավեց 57-րդ տեղը: Սվետլանա Տիգրանյանը 401,8 միավորով 113-րդն էր:

Մեր հավաքականի հրաձիգները համեստ արդյունքներ են ցույց տվել նաեւ փոքր տրամաչափի հրացանով 50 մետր եւ 3 դիրքից վարժություններում՝ չկարողանալով եզրափակիչի ուղեգիր նվաճել:

# «Բավարիան» աշխարհի ամենաթանկ ֆուտբոլային ապրանքանիշ

**Brand Finance գործակալությունը հրապարակել է աշխարհի ամենաթանկ ֆուտբոլային ապրանքանիշների ամենամյա ցանկը: Գերմանիայի նորընծա չեմպիոն, չեմպիոնների գավաթակիր Մյունխենի «Բավարիայի» ապրանքանիշը գնահատվել է 566 մլն ֆունտ ստեռլինգ: Այս ցուցանիշով «Բավարիան» շրջանցել է մինչ այդ 1-ին հորիզոնականը զբաղեցնող անգլիական «Մանչեսթր Յունայթեդին»՝ 551 մլն:**

**Վարկանիշը կազմելուց հաշվի են առնվում ակումբների եկամուտները տոմսերի եւ սեփական արտադրանքի վաճառքից, հովանավորական պայմանագրերից, հեռուստահեռարձակման իրավունքի վաճառքից:**

**Լավագույն եռյակը եզրափակում է Մադրիդի «Ռեալը»՝ 409 մլն, որին հաջորդում են «Բարսելոնը»՝ 376 մլն, «Չելսին»՝ 275 մլն եւ «Արսենալը»՝ 270 մլն:**

# «Ռեալը» երկամյա պայմանագիր կառաջարկի Հայնկեսին

**Ինչպես հայտնի է, Մյունխենի «Բավարիային» չեմպիոնների լիգայի հաղթողի կոչմանն արժանացրած Յուպ Հայնկեսը մրցաշրջանի ավարտից հետո հեռանալու է թիմից: Նոր մրցաշրջանում թիմի ղեկը կստանձնի «Բարսելոնի» նախկին գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան: Իսկ Հայնկեսը հավանաբար գլխավորի «Ռեալը»: Վերջինս պատրաստ է գերմանացի մասնագետին 2 տարվա պայմանագիր առաջարկել, եթե Կառլո Անչելոտին չկարողանա լքել ՊՍԺ-ն:**

# Ըմբշամարտը հավակնում է 2020-ի օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկվելուն

**Սանկտ Պետերբուրգում ընթացող ՄՕԿ-ի գործկոմի նիստում ըմբշամարտն ընդգրկվել է այն 3 մարզաձեւերի ցանկում, որոնք հավակնում են 2020-ի ամառային օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկվելուն: Մյուս 2 մարզաձեւերն են բեյսբոլ-սոֆթբոլը եւ սկվոշը: Սեպտեմբերի 8-ին Բուենոս Այրեսում կայանալիք ՄՕԿ-ի 125-րդ նստաշրջանում քվեարկության արդյունքում նշված 3 մարզաձեւերից կընտրվի մեկը, որը կընդգրկվի 2020-ի օլիմպիական խաղերի ծրագրում:**

**Օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկվելուն հավակնում էին նաեւ կարատեն, անվավոր չմշկասահքը, վեյկբորդինգը, ուշուն եւ մարզական ժայռամագլցումը:**



# Մեդալների հարուստ ավարով

**Թաեքվոնդոյի «Ար-Մար» ակումբի 10 պատանի մարզիկներով համալրված Հայաստանի հավաքականը գերազանց ելույթներ ունեցավ Վրաստանի պատանիների բաց առաջնությունում: Մեր մարզիկները նվաճեցին 2 ոսկե, 3 արծաթե եւ 4 բրոնզե մեդալ:**

**Իրենց գերազանց դրսեւորեցին եւ մրցաշարի հաղթողներ դարձան Արթուր Վարդանյանն ու Սարգիս Գրիգորյանը: Արծաթե մեդալներով պարգեւատրվեցին Հենրի Բադալյանը, Արթուր Գալստյանն ու Գագիկ Առաքելյանը: Բրոնզե մեդալներ նվաճեցին Ռուբեն Առաքելյանը, Ռոման Հայրապետյանը, Սլավա Խաչատրյանն ու Ռաֆիկ Սուքիասյանը: Հավաքականի գլխավոր մարզիչը Գագիկ Դարբինյանն էր: Մրցումները սպասարկող մրցավարների թվում էր Դավիթ Ղահրամանյանը:**

**Վրաստանի ներկայացուցիչների հետ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել հուլիսին հավաք կազմակերպելու հարցում: Դրանից հետո հայ թաեքվոնդոյիստները կնախապատրաստվեն օգոստոսին Բուլղարիայում կայանալիք աշխարհի պատանեկան առաջնությանը:**

# «Հրազդան» մարզադաշտ մուտքն ազատ է

**Հունիսի 6-ին ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականը 2015-ի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի մեկնարկային խաղում «Հրազդանում» կհյուրընկալի Իսլանդիայի հավաքականին: «Հրազդան» մարզադաշտի մուտքն ազատ է: Խաղը կսկսվի ժամը 19-ին:**

**Հիշեցնենք, որ Հայաստանի երիտասարդական հավաքականն ընդգրկված է ընտրական 10-րդ խմբում, որտեղ բացի իսլանդացիներից, կմրցի նաեւ Ֆրանսիայի, Ղազախստանի եւ Բելառուսի ընտրանիների հետ:**

**Ընտրական 10-րդ խմբի մրցաշարի մեկնարկը տրվել է մարտի 26-ին Ժոդինոյում կայացած Բելառուս-Իսլանդիա հանդիպումով: Խաղն ավարտվել է իսլանդացիների 2-1 հաշվով տոնած հաղթանակով:**

**Հայաստանի երիտասարդական հավաքականը գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանի գլխավորությամբ մայիսի 26-ից սկսել է նախապատրաստվել իսլանդացիների հետ ընտրական մրցախաղին:**

# Ձյուդոյիստները կմասնակցեն միջազգային մրցաշարի

**Ձյուդոյի Հայաստանի երիտասարդական եւ պատանեկան հավաքականները մեկնել են Ռուսաստանի Բառնաուլ քաղաք, որտեղ կմասնակցեն միջազգային մրցաշարի: Պատանիների մրցաշարում Հայաստանը կներկայացնեն Գոռ Հակոբյանը (50 կգ), Վահե Ղազարյանը (55 կգ), Աշոտ Մնացականյանը (60 կգ), Նարեկ Շաստերյանը (66 կգ), Դավիթ Նալբանդյանը (73 կգ) եւ Գրիգոր Սահակյանը (81 կգ):**

**Երիտասարդների մրցումներում հանդես կգան Գրիգոր Մխիթարյանը (55 կգ), Գարիկ Հարությունյանը (60 կգ) եւ Դավիթ Ղազարյանը (66 կգ):**

# Ներկայացվել են Սոչիի օլիմպիադայի մեդալները



**Սանկտ Պետերբուրգում կայացել է 2014-ի Սոչիի ձմեռային օլիմպիական եւ պարաօլիմպիկ խաղերի մեդալների շնորհանդեսը: Օլիմպիական մեդալները ներկայացրել է 2006-ի Թուրինի ձմեռային օլիմպիադայի չեմպիոնուհի, չմշկորդուհի Սվետլանա Ժուրովան, իսկ պարաօլիմպիկ խաղերի մեդալները ներկայացնելու պատիվն ունեցել է 2012-ի Լոնդոնի ամառային պարաօլիմպիադայի կրկնակի չեմպիոն Ֆյոդոր Տրիկոլիչը:**

**Մեդալները պատրաստվել են հատուկ տեխնոլոգիայով եւ աչքի են ընկնում յուրօրինակ դիզայնով: Մեդալները ոսկեջրելու համար օգտագործվել է 999 հարգի 3 կգ ոսկի: Օլիմպիական մեդալները կշռում են 460-531 գրամ: Պարաօլիմպիկ խաղերի մեդալներն ավելի ծանր են՝ 586 գրամ: Մեկ մեդալի պատրաստումը տեւել է 18 ժամ: Ընդհանուր առմամբ Սոչիում կխաղարկվի մեդալների 1300 հավաքածու: Սոչիի ձմեռային օլիմպիադայում մեդալների համար կպայքարեն 8000 մարզիկներ, իսկ պարաօլիմպիկ խաղերին կմասնակցեն 700 մարզիկներ:**

# Պերեսը պատրաստ է երջանկացնել Ռոնալդուին

**Մադրիդի «Ռեալի» նախագահ Ֆլորենտինո Պերեսը հայտարարել է, որ ամեն ինչ կանի Քրիշտիանու Ռոնալդուին թիմում պահելու եւ նրան աշխարհի ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստը դարձնելու համար: Պերեսը նշել է, որ ՊՍԺ-ն հետաքրքրվում է Ռոնալդուով, սակայն ֆրանսիական ակումբի ներկայացուցիչները մինչ օրս չեն կապվել «Ռեալի» հետ: Ըստ Պերեսի, Ռոնալդուն մնում է Մադրիդում: Նա երբեք խնդիրներ չի ունեցել ոչ թիմակիցների, ոչ էլ Ժոզե Մոուրինյոյի հետ: Պերեսը խոստացել է ամեն ինչ անել, որպեսզի Ռոնալդուն իրեն երջանիկ զգա: Պերեսը պորտուգալացուն համարում է աշխարհի լավագույն ֆուտբոլիստ:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Ինչո՞ւ երթեւեկությունը կանգնեց

## *Կամ սարոյանական տոն ըստ Էլֆիֆ Չոհրաբյանի*

Մայիսի 20-ին Երեւանի «Նարեկացի» արվեստի միության դիմաց հավաքվել էին Գյումրուց, Վանաձորից եւ Հրազդանից ժամանած մասնավորականներ՝ նշելու **Վիլյամ Սարոյանի «Բան ունեմ ասելու»** գրքի շնորհանդեսը: Պետպատվերով հրատարակված գիրքը, որը գրեթե սպառվել էր գրախանութներում, թարգմանել է արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ եւ դերասան **Էլֆիֆ Չոհրաբյանը**: Վանաձորի թատերական բուհի եւ Էլֆիֆ Չոհրաբյանի ղեկավարած դրամատիկական ստուդիայի ուսանողները՝ պլակատներով ու փուչիկներով, սարոյանական հումորով լի բազմանշանակ տեքստեր էին վանկարկում փողոցի մեջտեղում, ինչի պատճառով մի քանի րոպե կանգ առավ երթեւեկությունը: Անցորդները զարմացած ժպտում էին:




Այդ միջոցառումը շարունակվեց դահլիճում: Հայաստանի գրողների միության նախագահ **Լեւոն Անանյանը** գնահատանքի ջերմ խոսքեր ասաց թարգմանչի, նրա գրած պիեսների եւ գեղարվեստական արժանիքներով լի հեքիաթների մասին. «Էլֆիֆի թարգմանությունը բնագրային արժեք ունի եւ շատ համահունչ է սարոյանական պատկերային ողջ համակարգին: Այս ամենին նպաստել է այն հանգամանքը, որ Էլֆիֆը ուղղությունով թատրոնի ու գրականության մարդ է»:

Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ **Հակոբ Ղազանչյանը** բարձր գնահատեց թարգմանչի դրամատուրգիական, թարգմանական ու թատերական գործունեությունը: Նա հավելեց, որ պատրաստվում են Ամանորին բեմադրել Էլֆիֆ Չոհրաբյանի հեքիաթ-պիեսները, որոնք դրական արձագանք են գտել թատրոններում: Կենդանի երգով ու Սարոյանի ձայնով հնչած պարային-թատերականացված կատարումներով էին ընդմիջվում ելույթները: Տողերիս հեղինակը ՀԳՄ Լոռու մարզային բաժանմունքի կողմից թարգմանչին ներկայացրեց իր գործունեության չորս բնագավառներում՝ արձակում, դրամատուրգիայում, թարգմանության մեջ ու թատրոնում՝ հավելելով, որ նա նաեւ հանդիսականի կողմից սիրված է որպես դերասան. «Էլֆիֆ Չոհրաբյանը բոլոր չորս բնագավառներում էլ լուրջ ներդրում է ունենում: Շատ կարեւոր է, որ նա շատ բարեխիղճ թարգմանիչ է, կարողացել է ընթերցողին փոխանցել սարոյանական ոգին»:

Արվեստագիտության թեկնածու, թատրագետ **Արա Խզմալյանը**, ում խոսքը հաճախ ընդմիջվում էր ծափահարություններով, համառոտ խոսեց Սարոյանի դրամատուրգիայի, Վարդան Աճեմյանից հետո բեմադրված սարոյանական պիեսների եւ թարգմանչի՝ ամեն բառին պատասխանատվությամբ մոտենալու մասին, ապա հավելեց. «Երեւակայությամբ չկշռադատված ամեն խաղ անփույթ, անհաջող էքսպերիմենտ եւ անպատասխանատու վերաբերմունք խոսքի հանդեպ՝ որակվում է որպես պոստմոդեռնիզմ: Եվ այս համատեքստում ավելի արժեքավոր է դառնում Էլֆիֆ Չոհրաբյանի բացառիկ պատասխանատվությունը շարադրվող եւ հրապարակվող տեքստի հանդեպ, իսկ ինձ համար նրա տաղանդն իր բարձրակետին է հասնում պաստառներում»:

Գյումրուց ժամանած, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, բեմադրիչ **Սիրանույշ Ղուկասյանը** եւս բարձր գնահատեց սարոյանական թարգմանությունը, հավելեց, որ ինքը նույնպես գրախոսական է գրել թարգմանության մասին, եւ հայտնեց անակնկալը. «Գյումրում բեմադրվում է Էլֆիֆ Չոհրաբյանի թարգմանած «Ոստրեն ու մարգարիտը» պիեսը, որը Սարոյանի լավագույն արդիական գործերից է»:

Բանասիրական գիտությունների թեկնածու, գրականագետ **Հայկ Համբարձումյանը** մասնագիտորեն խոսեց թարգմանված գրքի արժեքավոր լինելու մասին եւ նշեց, որ տաղանդավոր մարդիկ հիմնականում մարզերում են լինում՝ հավելելով Է. Չոհրաբյանի հետաքրքրական, բազմաշերտ արձակի ու նրա մարդկային տեսակի մասին: Ջերմ խոսքերով ներկայացավ նաեւ Ա. Զորյանի տուն-թանգարանի տնօրեն, բանաստեղծուհի **Լենա Անթառանյանը**, ով նկատել է «իր մարդկային բացառիկ տեսակով» Է. Չոհրաբյանին, երբ վերջինս դեռ պատանի էր:

Բանաստեղծ **Վահե Արսենը** նշեց, որ շատ դժվար է Սարոյան թարգմանելը, իսկ թարգմանիչը պատվով է դուրս եկել «դրա տակից», քանի որ «ունի լեզվամտածողություն, նույնպես գրող է եւ թատրոնի մարդ»: «Սարոյանի պիեսների թարգմանությունը չէր հաջողվի, եթե Էլֆիֆ Չոհրաբյանը չլիներ Լոռվա մաքրությամբ եւ մեֆիստոֆելյան հեգնանքով»,- ասաց նա:

Թարգմանչին խոսելու համար տրվեց 257 վայրկյան: Նա խնդրեց ծափահարել նաեւ դահլիճում գտնվող մյուս տաղանդավոր թարգմանիչներին՝ Զավեն Բոյաջյանին եւ Արտեմ Հարությունյանին: «Չեմ ափսոսում, որ 5-6 տարի նվիրել եմ Սարոյանին: Այս պիեսներում ինձ գրավեց նրա գրական էքզիստենցիալիզմը, հումորն ու հեգնանքը, իսկ մեծ գրողները չեն կարող անհումոր լինել: Գրականության մեջ բութ լրջությունն անառողջության նշան է: Դիտելով արտեն Պուլիցերյան մրցանակ ստացած էլ. մեր Ռայսի պիեսների բեմադրությունները, որտեղ խաղում էր անգամ իր սիրելի դերասան Էդի Դաուլինգը, Սարոյանը դրանք տաղտկալի անվանեց, քանի որ զուրկ էին հումորից ու սրամտությունից»,- նշեց Է. Չոհրաբյանը եւ վերջում ասաց Սարոյանի «այդ օրվա ուղերձը», որը բազմանշանակ է՝ «Թեթեւ տարեք»:

Հանդիսականը միակարծիք էր շնորհանդեսի ինքնատիպության մասին, որը կազմակերպեց ավանդական միջոցառումների ծեսը: «Այսպիսի միջոցառումներ գրեթե չեն լինում այստեղ: Ինչ լավ է՝ եկանք այստեղ, եւ մեր օրն իմաստավորվեց Սարոյանով»,- նշեց Միեր Մկրտչյանի տիկինը՝ դերասանուհի **Թամար Հովհաննիսյանը**: Երեկոյան Վանաձորից ժամանած տասնյոթ հոգանոց խումբը հյուրընկալվեց Հենրիկ Մալյանի անվան կինոդերասանի տանը՝ անվճար դիտելով Վ. Սարոյանի «Պատմություններ գնացքում» ներկայացումը:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

# Անշարժ գույքի գործարքների քանակի աճն ապրիլին չպահպանվեց

*1-ին էջից*

Մարզերում, բացառությամբ Երեւանի, ապրիլին վաճառվել են 331 բնակարաններ, որոնց քանակը մարտի համեմատ նվազել է 5,2 տոկոսով, իսկ 2012-ի ապրիլի համեմատ աճել՝ 0,6 տոկոսով: Գները ապրիլին աճել են նույնպես 0,6 տոկոսով:

Երեւանից հետո, ամենաթանկ բնակարանները ապրիլին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է 292 հազար դրամ: Աբովյանում եւ Վաղարշապատում (Էջմիածնում) 1 քմ գինը 154 հազար հազար դրամ է կազմել, Նոր Հաճընում՝ 128 հազար դրամ, Եղեգնաձորում՝ 122 հազար դրամ, Արմավիրում եւ Գորիսում ՝ 121 հազար դրամ, Իջեւանում՝ 118 հազար դրամ 1 քմ դիմաց ցուցանիշներով:

2013-ի ապրիլին Հայաստանում գրանցվել է անհատական տների առուվաճառքի 411 գործարք, որից 87-ը՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առուվաճառքի գործարքների քանակը 2013-ի մարտի համեմատ նվազել է 17,1 տոկոսով, իսկ մարզերում միասին աճել՝ 12,1 տոկոսով: 2012-ի ապրիլի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում նվազել է 17,9, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 32,2 տոկոսով:

Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2012-ի ապրիլինի մարտի համեմատ Երեւանում աճել են 0,4 տոկոսով: Ըստ Երեւանի վարչական շրջանների՝ գների պատկերը հետեւյալն է եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | ապրիլ 2012 թ. | ապրիլ 2013 թ. | մարտ 2012 թ. |
| Կենտրոն | 458900 | 476100 | 474000 |
| Արաբկիր | 364500 | 383000 | 381150 |
| Քանաքեռ-Զեյթուն | 275200 | 295000 | 293450 |
| Նորք-Մարաշ | 301100 | 319200 | 318400 |
| Ավան | 255500 | 270500 | 269750 |
| Էրեբունի | 225300 | 239500 | 238850 |
| Շենգավիթ | 240000 | 255000 | 253900 |
| Դավթաշեն | 258300 | 276000 | 275200 |
| Աջափնյակ | 236700 | 250050 | 249000 |
| Մալաթիա-Սեբաստիա | 223000 | 238000 | 237100 |
| Նուբարաշեն | 144500 | 150500 | 149550 |
| Միջինը Երեւանում (բացի Նոր Նորքից) | 271200 | 286600 | 285500 |

Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գները ապրիլին մարտի համեմատ աճել են դարձյալ 0,4 տոկոսով: Ամենաթանկ անհատական տները Երեւանից հետո Ծաղկաձորում են՝ 1 քմ-ն՝ 305 հազար դրամ: Երկրորդը Աբովյանն է՝ 1 քմ-ն 155 հազար դրամ, երրորդը՝ Վաղարշապատը, որտեղ 1 քմ-ն կազմել է 153 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը՝ 136 հազար դրամ, Ջերմուկը՝ 131 հազար դրամ, Գորիսը՝ 130 հազար դրամ, Նոր Հաճընը՝ 129 հազար դրամ, Իջեւանը՝ 123 հազար դրամ, Բյուրեղավանը՝ 120 հազար դրամ 1 քմ դիմաց:

Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2013-ի ապրիլին 2012-ի ապրիլի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 26,2 տոկոսով, աճուրդով վաճառքներինը՝ 43,2 տոկոսով:

2013-ի ապրիլին 2013-ի մարտի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 6,3 տոկոսով, իսկ 2012-ի ապրիլի համեմատ՝ 2,7 տոկոսով:

Ապրիլին իրականացվել են հիփոթեքային գրավադրման 161 գործարքներ, 120-ը՝ Երեւանում: Մարտի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը Երեւանում աճել է 5,3 տոկոսով, իսկ մարզերում՝ նվազել 8,9 տոկոսով: 2012-ի ապրիլի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը Երեւանում աճել է 41,2 տոկոսով, իսկ մարզերում՝ նվազել 52,9 տոկոսով:

Այսպիսով, անշարժ գույքի շուկայում նախորդ երկու ամիսներին գործարքների զգալի աճը ապրիլին դադարեց: Նախորդ տարվա նույն ամսվա համեմատ գործարքների քանակի աճը շարունակվում է, ինչը նշանակում է, որ շուկան, այդուհանդերձ, այս տարի աշխուժացել է: Այդ աշխուժացումը դեռեւս գների վրա էապես չի ազդել: Դրանք շարունակում են մնալ գրեթե անփոփոխ:

# Գիշերային անսահմանափակ ինտերնետ ՎիվաՍել-ՄՏՍ-ից՝ ընդամենը 200 դրամով

Ուրախ ենք ներկայացնել «Գիշերային անսահմանափակ ինտերնետ» ծառայությունը, որի շնորհիվ «Ալո մենք», «Բարբառ» եւ «ԵՍ» կանխավճարային սակագնային պլանների բաժանորդները կարող են ամբողջ գիշեր օգտվել ինտերնետից անվճար:

Անհրաժեշտ է պարզապես ակտիվացնել ծառայությունը՝ ուղարկելով *145#, եւ 30 օր շարունակ 01:00-09:00 ժամանակահատվածում կարելի է օգտվել անսահմանափակ ինտերնետից: Ակտիվացման վճարն է 200 դրամ (ներառյալ ԱԱՀ):

«Գիշերային անսահմանափակ ինտերնետ»-ը հարմարավետ ծառայություն է, որն առաջարկում է որակյալ անսահմանափակ ինտերնետ՝ մատչելի գնով:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.mts.am կայքից կամ pda.mts.am բջջային կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:

## Հայտարարություն

Սույն թվականի հունիսի 7-ին, ժամը 12:00–ին ՀՀ Գեղարքունիքի մարզ Սևան-Ծովագյուղ ավտոճանապարհի աջակողմյան հատվածում գտնվող «Ալգա» հանգստի գոտու տարածքում տեղի կունենա նշված հանգստի գոտու աշխատանքային նախագծերի մասնագիտական եզրակացության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երևան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85

INDEX Ակումուլյատորների մասնագիտացված սրահ VARTA





Tel: (+374 10) 572011
Fax: (+374 10) 552085
Web: www.varmex.am

Հասցե՝ Երեւան, Տիգրան Մեծի 46
E-mail:varmex@mail.ru
FILTRON

www.azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 30.5.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: